

ՎՃԻՌ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

11 հուլիսի 2012թ. ք.Գյումրի

ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանը
նախագահությամբ դատավոր Ա. Խաչատրյանի
քարտուղարությամբ Լ. Գրիգորյանի
մասնակցությամբ՝ հայցվոր Ա. Ավետիսյանի
հայցվորի ներկայացուցիչ Ա. Խլղաթյանի
պատասխանող Լ. Բարսեղյանի
պատասխանողի ներկայացուցիչներ 1. Ա. Զեյնալյանի
2. Վ. Գրիգորյանի
3. Լ. Խաչատրյանի

Դռնբաց դատական նիստում քննելով քաղաքացիական գործն ըստ հայցի Արման Մինասի Ավետիսյանի (անձնագիր՝ **AG0688560**, տրված՝ **04.04.2006թ. 011-ից**) ընդդեմ Լևոն Ալբերտի Բարսեղյանի (անձնագիր՝ **AM0224995**, տրված՝ **16.03.2011թ. 001-ից**) պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկությունների հերքման, հրապարակայնորեն ներողություն խնդրելու պարտավորեցման և պատճառված վնասի հատուցման պահանջների մասին.

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

Հայցվոր Արման Ավետիսյանի անունից նրա ներկայացուցիչ Անի Խլղաթյանի կողմից **04.08.2011թ.** «Հայփոստ» ՓԲ ընկերության բաժանմունքին հանձնելու միջոցով հայցադիմում է ներկայացրել ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ Լևոն Բարսեղյանի՝ պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկությունների հերքման, հրապարակայնորեն ներողություն խնդրելու պարտավորեցման և պատճառված վնասի հատուցման պահանջների մասին: Հայցադիմումը վարույթ է ընդունվել **12.08.2011թ.**:

11.10.2011թ. պատասխանող Լ.Բարսեղյանի ներկայացուցիչ Ա.Զեյնալյանը հայցային վաղեմություն կիրառելու մասին դիմում է ներկայացրել Դատարանին՝ խնդրելով հայցային վաղեմություն կիրառելու հիմքով հայցը մերժել:

Պատասխանող Լ.Բարսեղյանը և նրա ներկայացուցիչները հացադիմումի պատասխաններ են ներկայացրել **30.08.2011թ.**, **09.09.2011թ.** և **23.05.2012թ.**:

2. Հայցվորի իրավական դիրքորոշումը.

Հայցվորի ներկայացուցիչը ներկայացված պահանջը հիմնավորել է հետևյալ փաստարկներով.

2011 թ. հունիսի **11-ից 16-ն** ընկած ժամանակահատվածում «Ժուռնալիստների Ասպարեզ ակումբ» հասարակական կազմակերպության նախագահ Լևոն Բարսեղյանի կողմից «Ժուռնալիստների Ասպարեզ ակումբ» ինտերնետային կայքում հրապարակվել են մի շարք հոդվածներ, մասնավորապես «Ընտանեկան կապալին էին հարվածելու», «Արման Ավետիսյանը ստում է անհասկանալի պատճառներով», «Կան բաներ, որ չեն ներվում» վերնագրերով, որոնցով

Մինաս Ավետիսյանի «Երկանք» և «Թել են մանուս» որմնանկարների տեղափոխումը որակվել է կամայական, անօրինական գործողություններ և «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Արման Ավետիսյանի հասցեին հնչել են պատիվը և արժանապատվությունն արատավորող արտահայտություններ: **2011**թ. հունիսի **16**-ի ինտերնետային կայքում հրապարակված «Ընտանեկան կապալին Էին հարվածելու» հոդվածով միաժամանակ, բացի իրականությանը չհամապատասխանող, հանրության մեջ թուրքմբռնում առաջացնող զրպարտչական տեղեկատվությունից, տեղ են գտել նաև Արման Ավետիսյանի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող վիրավորական արտահայտություններ, մասնավորապես՝ «Օրերս, արդարացնելով կառավարության որոշումը և որմնանկարների տեղափոխումը, որից, չենք կասկածում, Մինաս Ավետիսյանի որդին բավական ֆինանսական եկամուտ է ստացել»: Բացի այդ, կայքերից մեկին Լևոն Բարսեղյանը հայտարարել է, թե Մինասի որմնանկարները Երևան են տեղափոխվել գաղտնի: «Հասկանալով, որ «Ասպարեզ» ակումբի քարը ծանր է, Արման Ավետիսյանին առաջին և վերջին անգամ հորդորում ենք լարախաղացության համար համապատասխան թաղամաս ընտրել»: «Կան բաներ, որ չեն ներվում» հոդվածով ասվում է. «Այս պատմությունը տեղի ունեցավ մի ստից պատճառով. Գյումրեցի արվեստագետներն ու մշակույթի գործիչները մտածել են, թե տղամարդու հետ գործ ունեն, վստահել են նրա խոսքին ու պահակներ չեն շարել նկարների պահեստարանի դարպասների մոտ, այլապես ոչինչ հանել չէին կարողանա գործարանի բակից»: «Եվ, ի դժբախտություն իրեն, այդ կարող են ասել **2** տարեկաններից սկսած՝ վերջացրած զառամյալներով, ասվելու է քանի դեռ ինքը ողջ է, մինչև իր կյանքի վերջը ինքը լսելու է այս ու այն կողմից, որ «թռավ իր պայմանավորվածությունից», լսելու է պատմություններ, թե ինչու էր քաղաքում խոսքը խոսք է ինչու էր մարդու խոսքը թանկ միլիոնավոր դոլարներ արժեցող բոլոր որմնանկարներից, կլսի, թե ինչպես էին գյումրեցիք հին օրերում վարվում այդօրինակ կերպարների հետ. վզից գդալ չանցյալ էին կախում, որ թյուրիմացություններ չլինեին...»: «Արման Ավետիսյանի լեզվամտածողությունը մատնում է նրա «անձնվեր» էությունը. ասում է «...Հորս երկու որմնանկարները...»: Էս եսակենտրոն քաղաքացին մինչև հիմա գլխի չի ընկել, որ որմնանկարները, որոնց մասին խոսում ենք, հորը չեն, և վաղուց է՝ ինչ հորը չեն»: Վերոնշյալ հոդվածներում ասկա արտահայտությունները ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն հանդիսանում են վիրավորանք և զրպարտություն, ինչը ենթակա է պաշտպանության և փոխհատուցման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի **19**-րդ հոդվածը սահմանում է. «Անձի պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավը ենթակա են պաշտպանության այլ անձի կողմից հրապարակայնորեն արտահայտված վիրավորանքից և զրպարտությունից սույն օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված դեպքերում և կարգով»: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի **1087.1** հոդվածի **2**-րդ մասի համաձայն՝ «Վիրավորանքը խոսքի պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է»: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իմաստով՝ հրապարակային արտահայտությունը տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ կարող է չհամարվել վիրավորանք, եթե այն հիմնված է ստույգ փաստերի վրա (բացառությամբ բնական արատների) կամ պայմանավորված է գերակա հանրային շահով: Նույն հոդվածի **3**-րդ մասի համաձայն՝ «Զրպարտությունը անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ (statement of fact) հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը»: Այսպիսով, որպեսզի արտահայտությունը դիտվի որպես վիրավորանք կամ զրպարտություն, ՀՀ քաղաքացիական օրենսգրքին հերթին սահմանում է, որ այն պետք է լինի հրապարակային: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի **3**-րդ հոդվածի համաձայն՝ հրապարակումը տեղեկությունը մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցներով, համաշխարհային համակարգչային ցանցով (այսուհետ՝ Ինտերնետ), ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված այլ միջոցներով հանրությանը տեղեկացնելը և մատչելի դարձնելն է: ՀՀ վճռաբեկ դատարանը Վարդան Թեյմուրազյանը և Նունե Մոսիկյանն ընդդեմ «Արմենիա» հյուրանոցային համալիր» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն), «Արմենիա Մարիոթ» հյուրանոցային

համալիրի գլխավոր տնօրեն Ամի Միրոնի, Ընկերության գործադիր տնօրեն Փոլ Քոբյանի գործով պատճառաբանել է, որ արատավորող տեղեկությունները՝ որպես կողմի գնահատող արտահայտություններ, դատարան են ներկայացվել քաղաքացիական գործի շրջանակներում՝ հայցադիմումի պատասխանի ձևով, հնչեցվել են հայցվորի ներկայությամբ դատական նիստի ընթացքում (ամփոփվել վճռում), որին բացի կողմերից, «ի պաշտոնե» ներկա է եղել նաև դատական նիստը նախագահող դատավորը: Այսինքն՝ այդ տեղեկությունները հաղորդվել են այն անձին, որին վերաբերել են, դրանց արտահայտման հետևանքով հայցվորները շրջապատի, հանրության առջև չեն նսեմանում: Ելնելով վերոգրյալից՝ ակնհայտ է դառնում, որ ՀՀ վճռաբեկ դատարանը տեղեկությունները համարում է պատիվն ու արժանապատվությունն արատավորող, եթե այդ տեղեկությունների հետևանքով հայցվորը նսեմանում է շրջապատի և հանրության առջև: Սույն գործով պատասխանող Լ.Բարսեղյանի հրապարակած հոդվածներով հայցվոր Ա.Ավետիսյանի հասցեին հնչած արտահայտությունները կրել են հրապարակային բնույթ, որոնց արտահայտման հետևանքով հայցվորը շրջապատի և հանրության առջև նսեմանում է: Իսկ ինչ վերաբերում է վիրավորանք և զրպարտություն հասկացություններին, ապա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի **1087.1** հոդվածի **3**-րդ մասի պահանջի վերլուծությունից հետևում է, որ զրպարտություն համարելու համար էական են ներքոհիշյալ էական նշանակություն ունեցող փաստերը հաստատված լինելու հանգամանքը, մասնավորապես՝ **1)** արդյոք տարածված տեղեկությունները կրել են փաստացի և հրապարակային բնույթ, **2)** արդյոք հրապարակային ներկայացված փաստացի տվյալները համակարգչային ցանցով (այսուհետ՝ Ինտերնետ), ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված այլ միջոցներով հանրությանը տեղեկացնելը և մատչելի դարձնելը համապատասխանում են իրականությանը, **3)** արդյոք հրապարակային ներկայացված, իրականությանը չհամապատասխանող փաստացի տվյալներն արատավորում են անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը: Միաժամանակ, անհրաժեշտ է նաև ընդգծել **1087.1** հոդվածի **2**-րդ մասով տրված վիրավորանքի սահմանումը, ըստ որի՝ վիրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է: Այսինքն՝ քաղաքացիական օրենսգրքի **1087.1** հոդվածի **2**-րդ մասի պահանջի վերլուծությունից հետևում է, որ վիրավորանք համարելու համար էական են ներքոհիշյալ էական նշանակություն ունեցող փաստերը գործով հաստատված լինելու հանգամանքը, մասնավորապես՝ արդյոք կատարվել է արտահայտություն հրապարակված հոդվածով տպագրված կամ հեռարձակված որոշակի տեսքով (ձևով, բառերով և այլն), արդյոք կատարված արտահայտությունը կրում է հրապարակային բնույթ, արդյոք հրապարակային կատարված արտահայտությունն ուղղված է անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելուն: Գտնում են, որ **2011**թ. հունիսի **11**-ից **16**-ն ընկած ժամանակահատվածում [//www.asparez.am](http://www.asparez.am) ինտերնետային հասցեում տեղադրված հոդվածներում արված արտահայտությունները հրապարակային են, որոնք չեն համապատասխանում իրականությանը և այդ փաստացի տվյալներն արատավորում են հայցվոր Ա.Ավետիսյանի պատիվը, արժանապատվությունը և բարի համբավը, ինչը հիմնավորվում է հետևյալով. **2011**թ. հունիսի **16**-ին ինտերնետային կայքում հրապարակված «Ընտանեկան կապալին էին հարվածելու» հոդվածում ասվում է. «Օրերս, արդարացնելով կառավարության որոշումը և որմնանկարների տեղափոխումը, որից չենք կասկածում, Մինաս Ավետիսյանի որդին բավական ֆինանսական եկամուտ է ստացել»: Մինաս Ավետիսյանի «Երկանք» և «Թել են մանում» որմնանկարները համարվում են պետական սեփականություն, և ըստ ՀՀ Սահմանադրության **89** հոդվածի **3**-րդ կետի՝ պետական սեփականության կառավարումն իրականացվում է ՀՀ Կառավարության կողմից, որն էլ, իրականացնելով իր այդ գործառնությունը, իր թիվ **500**-Ա որոշմամբ նշված որմնանկարների տեղափոխման հետ կապված գործառնությունների իրականացումը վերապահել է «Մինաս Ավետիսյան» բարեգործական հիմնադրամին, որն էլ պատշաճ կարգով իրականացրել է կառավարության որոշման պահանջները: Բացի այդ, կայքերից մեկին պատասխանող Լ.Բարսեղյանը հայտարարել է, թե Մինասի որմնանկարները Երևան են տեղափոխվել գաղտնի, որը ևս չի համապատասխանում

իրականությանը, քանի որ երկու որմնանկարները Գյումրիից Երևան են տեղափոխվել օրը ցերեկով, երկու բեռնատարով: Լևոն Բարսեղյանը, հիշատակելով «գաղտնի» բառը, կարծես թե հայցվոր Ա.Ավետիսյանին վերագրում է ինչ-որ կասկածելի ու հանցավոր արարք, կամ էլ Արման Ավետիսյանին գողի պիտակավորում է տալիս: «Կան բաներ, որ չեն ներվում» հողվածով հայցվոր Ա.Ավետիսյանի հասցեին հնչում են վիրավորական արտահայտություններ՝ կապված նրա տղամարդկային արժանապատվության, անձնական հատկանիշների հետ, մասնավորապես. «Այս պատմությունը տեղի ունեցավ մի ստից պատճառով. Գյումրեցի արվեստագետներն ու մշակույթի գործիչները մտածել են, թե տղամարդու հետ գործ ունեն, վստահել են նրա խոսքին ու պահակներ չեն շարել նկարների պահեստարանի դարպասների մոտ, այլապես ոչինչ հանել չէին կարողանա գործարանի բակից: Եվ, ի դժբախտություն իրեն, այդ կարող են ասել **2** տարեկաններից սկսած՝ վերջացրած զառամյալներով, ասվելու է քանի դեռ ինքը ողջ է, մինչև իր կյանքի վերջը ինքը լսելու է այս ու այն կողմից, որ «թռավ իր պայմանավորվածությունից», լսելու է պատմություններ, թե ինչու էր քաղաքում խոսքը խոսք, և ինչու էր մարդու խոսքը թանկ միլիոնավոր դոլարներ արժեցող բոլոր որմնանկարներից, կլսի, թե ինչպես էին գյումրեցիք հին օրերում վարվում այդ օրինակ կերպարների հետ. վզից գդալ-չանցյալ էին կախում, որ թյուրիմացություններ չլինեին...»: «Թռավ իր պայմանավորվածությունից» արտահայտությունը չի համապատասխանում իրականությանը, քանի որ հայցվոր Ա.Ավետիսյանը ոչ մեկի հետ պայմանավորվածությունների մեջ չի մտել, և նրա համար էական չի եղել, թե Մինաս Ավետիսյանի որմնանկարներն ում կողմից են վերականգնվելու, նրա համար էական է եղել միայն որմնանկարների վերականգնումը: Բացի այդ, «Մինաս Ավետիսյան» մշակույթային բարեգործական հիմնադրամի գործադիր տնօրեն Ազատ Թովմասյանի և Գյումրիի քաղաքապետ Վարդան Ղուկասյանի միջև կնքվել էր մտադրությունների մասին համաձայնագիր, որով կողմերը պայմանավորվել էին հանդիպել մինչև մարտի **1**-ը և կնքել որմնանկարների վերականգնման վերաբերյալ պայմանագիր: «Արման Ավետիսյանի լեզվամտածողությունը մատնում է նրա «անձնվեր» էությունը, ասում է. «... Հորս երկու որմնանկարները»: Էս եսակենտրոն քաղաքացին մինչև հիմա գլխի չի ընկել, որ որմնանկարները, որոնց մասին խոսում ենք, հորը չեն, և վաղուց է, ինչ հորը չեն»: Նշված արտահայտության մեջ նկատելի է դառնում նաև պատասխանող Լ.Բարսեղյանի հեզմական վերաբերմունքը հայ մեծ նկարիչ Մինաս Ավետիսյանի նկատմամբ, քանի որ ըստ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի **38** հոդվածի՝ հեղինակային իրավունքը փոխանցվում է ժառանգաբար: Ժառանգաբար չեն փոխանցվում հեղինակության իրավունքը, անվան իրավունքը, համբավի և արժանապատվության իրավունքը, հետևանքի իրավունքը: Հետևաբար նշված որմնանկարների նկատմամբ հեղինակության իրավունքները պատկանել են, պատկանում են և պատկանելու են Մինաս Ավետիսյանին, և հայցվորի արտահայտությունը բխում է ոչ թե եսակենտրոն էությունից, այլ Մինաս Ավետիսյանի որմնանկարները չվերականգնվելու դեպքում, հոր որմնանկարները կորցնելու զայրույթից: «Հասկանալով, որ «Ասպարեզ» ակումբի քարը ծանր է, Արման Ավետիսյանին առաջին է վերջին անգամ հորդորում ենք լարախաղացության համար համապատասխան թաղամաս ընտրել»: «Լարախաղաց» բառը, ըստ Վ.Առաքելյանի ժամանակակից հայոց լեզվի բացատրական, ակադեմիական բառարանի, նշանակում է օդի մեջ պիրկ ձգված պարանի, լարի վրա խաղացող փահլևան, լարագնաց: Հայցվոր Ա.Ավետիսյանը չի տիրապետում լարախաղացի հմտություններին, հետևաբար նշված բառն օգտագործվել է փոխաբերական իմաստով, որն, ըստ Է.Աղայանի արդի հայերենի բացատրական բառարանի, նշանակում է չափազանց ճարպիկ, աչքակապությամբ զբաղվող, խաբեբա: Վերը նշված հողվածներով հայցվոր Ա.Ավետիսյանի անձի վերաբերյալ հնչած արտահայտություններն, ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի **1087.1** հոդվածի **2**-րդ մասի, համարվում են վիրավորանք, որը ներառում է խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունը: Գտնում են, որ **2011** թվականի հունիսի **11**-ից **16**-ն ընկած ժամանակահատվածում //www.asparez.am ինտերնետային հասցեում տեղադրված հողվածներում արված արտահայտությունները չեն համապատասխանում իրականությանը և այդ

փաստացի տվյալներն արատավորում են հայցվոր Ա.Ավետիսյանի պատիվն ու արժանապատվությունը: ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածը սահմանում է, որ անձի պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավը ենթակա են պաշտպանության այլ անձի կողմից հրապարակայնորեն արտահայտված վիրավորանքից և զրպարտությունից՝ նույն օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված դեպքերում և կարգով: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձը, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորել են վիրավորանքի կամ զրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան՝ վիրավորանք հասցրած կամ զրպարտություն կատարած անձի դեմ: Նույն օրենսգրքի 1087.1 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ զրպարտության փաստական հանգամանքների առկայության, բացակայության ապացուցման պարտականությունը կրում է պատասխանողը: ՀՀ Սահմանադրությունը, ամրագրելով տեղեկատվության և խոսքի ազատության իրավունքը, միաժամանակ մեկ այլ՝ 42 հոդվածով սահմանափակում է 27 հոդվածով սահմանված ազատությունը, որի իմաստից հետևում է, որ նշված ազատությունը կարող է սահմանափակվել օրենքով և կիրառվել այնքանով, որքանով դա չի խախտում այլոց իրավունքները՝ դրանով իսկ բացառելով ազատության իրավունքի չարաշահումն ու անձի իրավունքների և ազատությունների խախտումը, ինչը նշանակում է, որ եթե ներպետական օրենսդրությամբ սահմանված է խոսքի ազատության որոշակի սահմանափակում՝ կապված տարածված տեղեկատվությունն անձի վերաբերյալ զրպարտանք և (կամ) վիրավորանք պարունակելու հետ, ապա տեղեկատվություն տարածողի ազատությունը նման տեղեկություններ տարածելու մասով սահմանափակված է, ավելին՝ օրենքով սահմանված կարգով առաջացնում է քաղաքացիաիրավական պատասխանատվություն՝ վնասի փոխհատուցման ձևով: Փաստորեն, վերոգրյալը հիմք ընդունելով՝ հարկ է նշել, որ ցանկացած լրատվամիջոց, ՀՀ Սահմանադրության 27 հոդվածով նախատեսված խոսքի իրավունքի ազատության սկզբունքներից էլնելով, տարածելով համապատասխան տեղեկություն, պետք է նախ և առաջ ղեկավարվի ՀՀ Սահմանադրության 42 և 43 հոդվածներով և ազատության իրավունքը իրականացնի օրենքին համապատասխան, ինչպես նաև այնպես, որ այն չխախտի այլոց իրավունքները և ազատությունները՝ այդ կերպ գործելով օրենքի շրջանակներում և խուսափելով տարածվող հնարավոր քաղաքացիաիրավական պատասխանատվությունից: Իրենք՝ դիմել են նաև իրավունքի պաշտպանության արտադատարանական ձևին, մասնավորապես՝ ղեկավարվելով «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, գրություն են ուղարկել պատասխանողին պահանջելով հերքում տեղադրել 2011թ. հունիսի 11-ից 16-ն ընկած ժամանակահատվածում www.asparez.am ինտերնետային կայքում տեղադրված հոդվածներում առկա զրպարտություն և վիրավորանք պարունակող տեղեկությունների վերաբերյալ: Պատասխանողը գրությունն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում չի տեղադրել հերքում, այլ տեղադրել է 23.06.2011թ. «Ժուռնալիստների Ասպարեզ ակումբ» ՀԿ-ի նախագահ Լևոն Բարսեղյանին հասցեագրված Արման Ավետիսյանի գրությունը և խեղաթյուրել է Արման Ավետիսյանի հետ ունեցած հեռախոսազրույցը՝ ասելով, թե իբր Արման Ավետիսյանն ասել է. «Իմ ուղարկած պատասխանը տեղադրեք որպես հերքում»: Գրության սկզբնամասում ևս պատասխանողն իրականությանը չհամապատասխանող արտահայտություններ է արել՝ նշելով. «Առայժմ եզրափակում եմ այսքանով, ակնկալելով, որ Արման Ավետիսյանը, եթե անգամ որմնանկարներով, Էռնեսկյանի պատվերով ու կառավարության որոշման կատարմամբ զբաղված լինելու բերումով չհասցնի կարդալ այստեղ տեղադրված իր նամակը, ապա գոնե կշարունակի հետևել մեր կայքի հրապարակումներին, վստահ եմ՝ իր համար ահագին ուշագրավ բաներ է գտնելու, թեման, որ ինքը, մշակույթի նախարարությունն ու կառավարությունը բացեցին, սպառվելու է միայն այն ժամանակ, երբ քաղաքից տարված որմնանկարները կվերադարձվեն քաղաք»: «Էռնեսկյանի պատվերով» արտահայտությունը ոչ միայն չի համապատասխանում իրականությանը և համարվում է զրպարտություն, այլև իր մեջ ներառում է վիրավորանքի տարրեր, քանի որ հայցվոր Արման Ավետիսյանն ինքնուրույն անհատականություն է

և որևէ մեկի պատվերով չի գործում: Այսպիսով, **2011թ.** հունիսի **11-ից 16-ն** ընկած ժամանակահատվածում www.asparez.am ինտերնետային կայքում հրապարակված հոդվածներով արատավորվել է Արման Ավետիսյանի պատիվը, արժանապատվությունը և բարի համբավը: Արման Ավետիսյանի վարկը հասարակության մեջ պայմանավորված է ոչ միայն նրա անձնական հատկանիշներով, այլև նրանով, որ նա հայ մեծ նկարիչ Մինաս Ավետիսյանի որդին է և միաժամանակ «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահն է, իսկ նշված հիմնադրամը հետապնդում է արվեստի զարգացման և մշակութային օջախների պահպանման ու համաշխարհային հանրությանը Մինաս Ավետիսյանի արվեստի ներկայացման նպատակներ: Նշված կանոնադրական նպատակներն իրականացնելու համար «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամին տրամադրվում են հանգանակություններ, բացի այդ, նշված հիմնադրամը՝ հանձնիս Արման Ավետիսյանի, ակտիվ և շարունակական գործունեություն է ծավալում Մինաս Ավետիսյանի որմնանկարների վերականգնման ուղղությամբ՝ համագործակցելով տարբեր ֆիզիկական և իրավաբանական անձանց, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ, ովքեր տրամադրում են դրամական միջոցներ՝ որմնանկարները վերականգնելու համար: Հետևաբար, արատավորելով Արման Ավետիսյանի բարի համբավը, պատիվն ու արժանապատվությունը, պատասխանողը սպառնալիքի տակ է դնում «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամի կանոնադրական նպատակների իրականացման և Մինաս Ավետիսյանի որմնանկարների վերականգնման համար նախատեսվող դրամական միջոցների տրամադրումը, ինչը հիմնավորվում է www.asparez.am ինտերնետային կայքում հրապարակված «Ընտանեկան կապալին էին հարվածելու» հոդվածով, որում նշվել է. «Օրերս, արդարացնելով կառավարության որոշումը և որմնանկարների տեղափոխումը, որից, չենք կասկածում, Մինաս Ավետիսյանի որդին բավական ֆինանսական եկամուտ է ստացել», իսկ «Մինաս Ավետիսյան» բարեգործական հիմնադրամին հատկացվող նվիրաբերությունները տարեկան կտրվածքով կազմում են **20.500.000** ՀՀ դրամ, քանի որ հիմնադրամի գործունեության ծավալման պահից հիմնադրամին հատկացվել է **82.000.000** ՀՀ դրամ նվիրաբերություն: Ուստի հայցվորին վերագրելով նրա հոր՝ Մինաս Ավետիսյանի, որմնանկարների տեղափոխման արդյունքում ֆինանսական եկամուտների ստացման հանգամանքը, արատավորվում է ոչ միայն Արման Ավետիսյանի բարի համբավը, պատիվն ու արժանապատվությունը, այլ նաև՝ «Մինաս Ավետիսյան» բարեգործական հիմնադրամի անշահախնդրությունը:

Հացվորը Դատարանից խնդրել է. ա) պարտավորեցնել պատասխանողին դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելուն հաջորդող կայքի հրապարակումներում հրապարակային ներողություն խնդրել Արման Ավետիսյանից և տեղադրել այդ նյութը www.asparez.am ինտերնետային կայքում. բ) պարտավորեցնել պատասխանողին www.asparez.am ինտերնետային կայքում՝ երևացող վայրում, հրապարակել Դատարանի վճիռը՝ նշումով. «ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վճռով պարտավորեցվել է «Ժուռնալիստների Ասպարեզ ակումբ» ՀԿ-ի նախագահ Լևոն Բարսեղյանին ներողություն խնդրել «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Արման Ավետիսյանից զրպարտության և վիրավորանքի համար: Ներկայացվում է դատարանի վճռի ամբողջական տեքստը». գ) Լևոն Բարսեղյանից հօգուտ Արման Ավետիսյանի բռնագանձել **2.000.000** ՀՀ դրամ, որից **500.000** ՀՀ դրամ՝ որպես Արման Ավետիսյանի հասցեին հնչած վիրավորանքի դիմաց հատուցում և **1.500.000** ՀՀ դրամ՝ որպես Արման Ավետիսյանի հասցեին հնչած զրպարտության դիմաց հատուցում, ինչպես նաև պարտավորեցնել Լևոն Բարսեղյանին հատուցելու Արման Ավետիսյանին պատճառված նյութական վնասը՝ **200.000** ՀՀ դրամի չափով՝ կապված Արման Ավետիսյանի կողմից իրավունքների պաշտպանության համար կատարված ծախսերի հետ:

Ներկայացված պահանջը հիմնավորելու համար հայցվորի ներկայացուցիչը ներկայացրել է հետևյալ ապացույցները.

1. www.asparez.am ինտերնետային կայքում հրապարակված՝ «Ընտանեկան կապալին էին հարվածելու», «Արման Ավետիսյանը ստում է անհասկանալի պատճառներով» և «Կան բաներ, որ չեն ներվում» հոդվածների համապատասխան քաղվածքները, ըստ որոնց «Ժուռնալիստների Ասպարեզ ակումբ» հասարակական կազմակերպության www.asparez.am ինտերնետային կայքում Լևոն Բարսեղյանը **11.06.2011**թ. հրապարակել է «Կան բաներ, որ չեն ներվում» հոդվածը (Լևոն Բարսեղյանի պատասխանը Արման Ավետիսյանին), որում նշվել են հետևյալ արտահայտությունները. «www.slaq.am կայքը հունիսի 11-ին, ժամը 13:17-ին հրապարակել է հետևյալը. «Մինասի որմնանկարները Գյումրիից Երևան են տեղափոխվել, բայց ոչ գաղտնի»: «Նշենք, որ «Ասպարեզ» ակումբի նախագահ Լևոն Բարսեղյանը կայքերից մեկին հայտարարել էր, թե Մինասի որմնանկարները Երևան են տեղափոխվել գաղտնի: Ի՞նչ է նշանակում թաքուն են տեղափոխվել: Հորս երկու որմնանկարները Գյումրիից Երևան են տեղափոխվել օրը ցերեկով, երկու բեռնատարով»: «Եվ, ի դժբախտություն իրեն, այդ կարող են ասել ու ասելու են 2 տարեկաններից սկսած՝ վերջացրած զառամյալներով, ասվելու է քանի դեռ ինքը ողջ է, մինչև իր կյանքի վերջն ինքը լսելու է այս ու այն կողմից, որ «թռավ իր պայմանավորվածությունից», լսելու է պատմություններ, թե ինչու էր քաղաքում խոսքը խոսք և ինչու էր մարդու խոսքը թանկ միլիոնավոր դոլարներ արժեցող բոլոր որմնանկարներից, կլսի,, թե ինչպես էին գյումրեցիք հին օրերում վարվում այդօրինակ կերպարների հետ. վզից գդալ-չանգյալ էին կախում, որ թյուրիմացություններ չլինեին...»: «Այս պատմությունը տեղի ունեցավ մի ստից պատճառով. գյումրեցի արվեստագետներն ու մշակույթի գործիչները մտածել են, թե տղամարդու հետ գործ ունեն, վստահել են նրա խոսքին ու պահակներ չեն շարել նկարների պահեստարանի դարպասների մոտ, այլապես ոչինչ հանել չէին կարողանա գործարանի բակից»: Արման Ավետիսյանի լեզվամտածողությունը մատնում է նրա «անձնվեր» էությունը. ասում է. «... Հորս երկու որմնանկարները...»: Էս եսակենտրոն քաղաքացին մինչև հիմա գլխի չի ընկել, որ որմնանկարները, որոնց մասին խոսում ենք, հորը չեն, և վաղուց է՝ ինչ հորը չեն»: «Ժուռնալիստների Ասպարեզ ակումբ» հասարակական կազմակերպության www.asparez.am ինտերնետային կայքում **15.06.2011**թ. հրապարակվել է «Արման Ավետիսյանը ստում է անհասկանալի պատճառներով» հոդվածը, որում նշվել են հետևյալ արտահայտությունները. «...Հասկանալով, որ «Ասպարեզ» ակումբի քարը ծանր է, Արման Ավետիսյանին առաջին և վերջին անգամ հորդորում ենք լարախաղացության համար համապատասխան թաղամաս ընտրել...»: «Ժուռնալիստների Ասպարեզ ակումբ» հասարակական կազմակերպության www.asparez.am ինտերնետային կայքում Նարեկ Լևոնյանի կողմից **16.06.2011**թ. հրապարակվել է «Ընտանեկան կապալին էին հարվածելու» հոդվածը, որում նշվել են հետևյալ արտահայտությունները. «...Օրերս, արդարացնելով կառավարության որոշումը և որմնանկարների տեղափոխումը, որից, չենք կասկածում, Մինաս Ավետիսյանի որդին բավական ֆինանսական եկամուտ է ստացել...»:

2. ՀՀ կառավարության **28.04.2011**թ. թիվ 500-Ա որոշումը, որի 1-ին կետով թույլատրվել է «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամին «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲ ընկերության միջոցների հաշվին իրականացնել «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմ» ՊՈԱԿ-ին ամրացված՝ ՀՀ Շիրակի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված և պետական սեփականություն հանդիսացող Գյումրի քաղաքի «Էլեկտրատեխնիկական գործարան ՓԲ ընկերության նախկին ճաշարանի շենքում գտնվող՝ Մինաս Ավետիսյանի «Երկանք» և Գյումրի քաղաքի «Գավառնուհետք» գործարան (Օմեգա)» ՓԲ ընկերության շենքում գտնվող «Թել են մանում» որմնանկարների տեղափոխման և վերականգնման աշխատանքները:

3. Արման Ավետիսյանի կողմից **23.06.2011**թ. Լևոն Բարսեղյանին ուղարկված գրության պատճեն, որով Արման Ավետիսյանը հայտնել է, որ **2011**թ. հունիսի 11-ից մինչև 16-ն ընկած ժամանակահատվածում Գյումրու «Ասպարեզ» ակումբի ինտերնետային կայքում հրապարակվել են մի շարք հոդվածներ, մասնավորապես՝ «Ընտանեկան կապալին էին հարվածելու», «Արման Ավետիսյանը ստում է անհասկանալի պատճառներով» և «Կան բաներ, որ չեն ներվում» վերանագրերով, որոնցով Մինաս Ավետիսյանի «Երկանք» և «Թել են մանում» որմնանկարների

տեղափոխումը որակվել է կամայական և անօրինական գործողություններ: Նշված որմնանկարները համարվում են պետական սեփականություն, ըստ ՀՀ Սահմանադրության **89** հոդվածի **3**-րդ կետի, պետական սեփականության կառավարումն իրականացվում է ՀՀ կառավարության կողմից, որն էլ, իրականացնելով իր այդ գործառույթը, թիվ **500**-Ա որոշմամբ նշված որմնանկարների տեղափոխման հետ կապված գործառույթների իրականաումը վերապահել է «Մինաս Ավետիսյան» բարեգործական հիմնադրամին, որն էլ պատշաճ կարգով իրականացրել է ՀՀ կառավարության որոշման պահանջները: **2011**թ. հունիսի **16**-ին ինտերնետային կայքում հրապարակված «Ընտանեկան կապալին էին հարվածելու» հոդվածով միաժամանակ, բացի իրականությանը չհամապատասխանող, հանրության մեջ թյուրըմբռնում առաջացնող զրպարտչական տեղեկատվությունից, տեղ են գտել նաև իր անձի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող վիրավորական արտահայտություններ: Նշված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը, ինքն այդ արտահայտությունները գնահատում է որպես զրպարտչական գործողություններ՝ իր անձի արժանապատվությունը ստորացնող և բարի համբավն արատավորող տեղեկություններ, որոնք իրենց մեջ պարունակում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի **1087.1** հոդվածով նախատեսված զրպարտության և վիրավորանքի հատկանիշներ: Դեկլարվելով «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի **8, 9** հոդվածներով, պահանջել է մեկ շաբաթյա ժամկետում հերքել իր իրավունքները խախտող փաստացի անճշտությունները նույն «Ասպարեզ» ակումբին պատկանող ինտերնետային կայքով: Եթե լրատվական գործունեություն իրականացնողը՝ «Ասպարեզ ակումբ» հասարակական կազմակերպությունը, կհրաժարվի տարածել հերքումը կամ պատասխանը կամ կխախտի դրանք տարածելու՝ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգն ու ժամկետը, ապա ինքն իրավունքների խախտման հիմքով, օրենքով սահմանված կարգով կդիմի դատարան՝ հերքումը տարածելու, իր պատասխանը հրապարակելու և բարոյական վնասը հատուցելու հայցով:

4. Անի Խլղաթյանի էլեկտրոնային փոստի էջից արտատպվածք, ըստ որի **28.06.2011**թ., ժամը **08:59**-ին Անի Խլղաթյանի կողմից lewon@asparez.am էլետրոնային հասցեին ուղարկվել է երկու փաստաթուղթ՝ «Arman Avetisyanı namak» վերնագրով:

5. «Քաղ. մշակույթի և համաձայնությունների զարգացման «Շիրակ Կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից «Մինաս Ավետիսյան» բարեգործական հիմնադրամի նախագահ Արման Ավետիսյանին ուղղված **08.06.2011**թ. գրությունն այն մասին, որ ի կատարումն ՀՀ կառավարության **28.04.2011**թ. թիվ **500**-Ն որոշման՝ «Թե՛լ են մանուկ» և «Երկանք» որմնանկարների վերականգնման և տեղափոխման հետ կապված ստեղծված հասարակական կարծիքը, բանակցությունները մշակույթի նախարարի, ինչպես նաև պարոն Էրնեկյանի հետ և Գյումրու շուրջ **1000** մտավորականների առաջարկությունները հաշվի առնելով, «Շիրակ Կենտրոն» հասարակական կազմակերպությունը խնդրել է Արման Ավետիսյանի միջնորդությունը աշխատանքային խմբին՝ վերականգնողական աշխատանքների բոլոր փուլերն իրականացնել Գյումրիում: Նշվել է նաև, որ իրենց առաջարկը հնարավորություն կտա հասարակական քննարկումների միջոցով վիճահարույց խնդիրը մոցնել բնականոն հուն: Տվյալ գրության մեջ նշված է նաև, որ նամակ-ուղերձին միացել են նաև մտավորականներ, և գրությունն ստորագրած է նաև Գյումրի քաղաքի պատմամշակութային անշարժ հուշարձանների և շարժական արժեքների պահպանության հանձնախմբի անդամներ Գարիկ Մանուկյանի, Համբարձում Ղուկասյանի, Հասմիկ Մելքոնյանի և Արթուր Գևորգյանի կողմից:

6. «Մինաս Ավետիսյանի» բարեգործական հիմնադրամի նախագահ Արման Ավետիսյանի կողմից «Քաղ. մշակույթի և համաձայնությունների զարգացման «Շիրակ Կենտրոն» հասարակական կազմակերպությանը, Գյումրի քաղաքի պատմամշակութային անշարժ հուշարձանների և շարժական արժեքների պահպանության հանձնախմբին և ՀՀ մշակույթի նախարարին ուղղված գրություններն այն մասին, որ «Մինաս Ավետիսյան» բարեգործական հիմնադրամը և գլխավոր վերականգնող Ֆարրիցիո Յակոպիսին ունեն պայմանագրից բխող խիստ ժամկետային և ֆինանսական պարտավորություններ, որոնց պատշաճ իրականացման համար անհրաժեշտ է **1)** առանց հիմնադրամի ղեկավարության թույլտվության, արգելել կողմնակի անձանց մուտքը տվյալ պահին

բացօթյա արվեստանոց հանդիսացող տարածք, հակառակ դեպքում կիսաթարվի աշխատանքային գործընթացը, որը բացասական կանդրադառնա ազգային արժեք հանդիսացող որմնանկարի վերականգնման որակական հատկանիշների և գեղագիտական տեսքի վրա, 2) ելնելով նախկինում կիրառված և հաջողված փորձից, անթույլատրելի են համարում տեխնիկական և տեխնոլոգիական պրոցեսների հերթականության որևէ խախտում, ուստի անհրաժեշտ են համարում աշխատանքները շարունակել Երևանում, քանի որ նախատեսվածի համաձայն, Երևանում են իրականացվել հետևյալ անհրաժեշտ գործողությունները՝ ա) նախապատրաստվել է **13,4 x 3,40** հենք՝ բաղկացած **15** առանձին մասերից և ամրացված Իտալիայից ներմուծված բավականին մեծ արժեք և հատուկ օգտագործման պահանջներ ունեցող նյութերով և որի տեղափոխումը կրերի հենքի դեֆորմացմանը, իսկ ժամկետի պահպանման դեպքում՝ հենքի և ամրակների անջատմանը, բ) նախապատրաստված են նաև Իտալիայից ներմուծված համալիր նյութերի խառնուրդները, որոնց ժամկետների և ջերմային պայմանների խաթարումը կազդի վերջիններիս որակական և տեխնիկական ցուցանիշների վրա: Վերականգնող Ֆաբրիցիո Յակոպինին փաստում է, որ որմնանկարների վերականգնման գործընթացը տեսականորեն հնարավոր է իրականացնել Գյումրիում, սակայն դրանց գործնական իրականացումը՝ բխող վերոհիշյալ կետերից, պրակտիկորեն անհնար է: Ազգային մշակութային ժառանգության պահպանման շահերից է բխում, որպեսզի խստորեն պահպանվեն իտալական մեթոդիկայով նախատեսված տեխնիկական և տեխնոլոգիական գործողությունների հերթականությունը:

7. «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամի և «Բեկկարիա» ՄՊ ընկերության միջև **23.06.2011**թ. կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի պատճեն, ըստ որի Բեկկարիա» ՄՊ ընկերությունը պարտավորվել է իրականացնել «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամի ներկայացուցչություն և շահերի պաշտպանություն ՀՀ դատարաններում, տարբեր պետական մարմիններում, հասարակական և այլ կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում: Նույն պայմանագրով նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ կատարելու համար սահմանվել է վճար՝ **200.000** ՀՀ դրամ:

8. Պետական տուրքի վճարումը հավաստող անդորրագիր, ըստ որի հայցվորի ներկայացուցիչ Ա.Խղաթյանի կողմից սույն հայցադիմումը Դատարան ներկայացնելու համար վճարվել է **44.000** ՀՀ դրամ պետական տուրք:

Դատաքննության ընթացքում հայցվոր Արման Ավետիսյանը պնդեց հայցը և հայցադիմումում շարադրված փաստական հանգամանքները: Հայցվորի ներկայացուցիչ Ա.Խղաթյանը հայտնեց, որ իրենք պնդում են հայցն ամբողջությամբ և գտնում են, որ պատասխանող Լ.Բարսեղյանի կողմից Արման Ավետիսյանի հասցեին հնչեցրած զրպարտչական արտահայտություններ են համարվում **11.06.2011**թ. հրապարակված՝ «Կան բաներ, որ չեն ներվում» հոդվածում նշված այն արտահայտությունը, որ Մինաս Ավետիսյանի որմնանկարներն Արման Ավետիսյանի կողմից Երևան են տեղափոխվել գաղտնի, նույն հոդվածում նշված այն արտահայտությունը, որ «Արման Ավետիսյանը թռավ իր պայմանավորվածությունից», Արման Ավետիսյանի պատասխանի **30.06.2011**թ. հրապարակման նախաբանում արված այն արտահայտությունը, որ «Արման Ավետիսյանը գործել է Էռնեկյանի պատվերով», **16.06.2011**թ. հրապարակված՝ «Ընտանեկան կապալին էին հարվածելու» հոդվածում նշված այն արտահայտությունը, որ «Մինաս Ավետիսյանի որդին բավական ֆինանսական եկամուտներ է ստացել», իսկ պատասխանող Լ.Բարսեղյանի կողմից Արման Ավետիսյանի հասցեին հնչեցրած վիրավորական արտահայտությունն են համարում **11.06.2011**թ. հրապարակված՝ «Կան բաներ, որ չեն ներվում» հոդվածում նշված այն արտահայտությունը, որ «...ցյումրեցի արվեստագետներն ու մշակույթի գործիչները մտածել են, թե տղանարդու հետ գործ ունեն...», նույն հոդվածում նշված այն արտահայտությունը, որ «...թե ինչպես էին գյումրեցիք հին օրերում վարվում այդօրինակ մարդկանց հետ. վզից գդալ-չանգյալ էին կախում, որ թյուրիմացություններ չլինեին...» և **15.06.2011**թ. հրապարակված «Արման Ավետիսյանը ստում է անհասկանալի պատճառներով» հոդվածում նշված այն արտահայտությունը, որ «...Արման Ավետիսյանին առաջին և վերջին անգամն հորդորում ենք լարախաղացության համար

համապատասխան թաղամաս ընտրել»: Գտնում է, որ գործի քննության ընթացքում ձեռք բերված ապացույցներով հաստատվեց, որ Արման Ավետիսյանը որևէ պայմանավորվածություն չի խախտել, ուստի որևէ պայմանավորվածությունից «չի թռել», նա որմնանկարները գաղտնի չի տեղափոխել Երևան, նա որմնանկարները պահեստում տեղավորելուց հետո գյումրեցի արվեստագետներին և հասարակական գործիչներին ասել է, որ որմնանկարները այդ վիճակով Գյումրիում կարող են մնալ միայն երկու օր և երկու օրն անցնելուց հետո նա դրանք տեղափոխել է Երևան, Արման Ավետիսյանը որևէ մեկի պատվերով, այդ թվում՝ Էռնեստյանի պատվերով չի գործել: Հայտնեց նաև, որ Արման Ավետիսյանն իր կողմից **23.06.2011թ.** կազմված նամակը Լևոն Բարսեղյանին ուղարկելով, ամենին մտադրություն չի ունեցել, որ դա հրապարակվելու է որպես իր հասցեին հնչած արտահայտությունների հերքում կամ պատասխան, բացի այդ, եթե անգամ այդ նամակը հրապարակվել է որպես պատասխան, ապա խախտվել է «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի **8-րդ հոդվածի 6-րդ մասի** պահանջը: Առարկեց նաև պատասխանողի կողմից ներկայացված՝ հայցային վաղեմություն կիրառելու մասին դիմումի դեմ՝ պատճառաբանությամբ, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի **1087.1** հոդվածի **13-րդ** մասով սահմանվել է, որ վիրավորանքի կամ զրպարտության վերաբերյալ գործերով անձն իր իրավունքի պաշտպանության հայց կարող է ներկայացնել դատարան՝ վիրավորանքի կամ զրպարտության մասին իրեն հայտնի դատնալու պահից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան վիրավորանքի կամ զրպարտության պահից վեց ամսվա ընթացքում: Նշված իրավական նորմի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ **ԵԿԴ/2293/02/10** քաղաքացիակա գործով ըստ հայցի Թաթուլ Մանասերյանի ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊ ընկերության՝ զրպարտությունը հերքելու և փոխհատուցում վճարելու պահանջների մասին, **27.04.2012թ.** կայացված որոշման մեջ հստակարձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի **1087.1** հոդվածի **13-րդ** մասի սահմանած կարգով իրավունքի պաշտպանության հայց կարող է ներկայացվել դատարան՝ վիրավորանքի և զրպարտության մասին անձին հայտնի դատնալու պահից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան վիրավորանքի կամ զրպարտության պահից վեց ամսվա ընթացքում: Օրենսդիրը հնարավորություն է տվել շահագրգիռ անձին դատարան դիմել բոլոր դեպքերում ոչ ուշ, քան մինչև վիրավորանքի կամ զրպարտության պահից վեց ամիսը լրանալը՝ դրանում ներառելով նաև զանգվածային լրատվամիջոցին հերքման պահանջ ներկայացնելու համար նախատեսված մեկամսյա ժամկետը: Հայցային վաղեմության ժամկետի հոսքը սկսվում է այն պահից, երբ անձին հայտնի է դարձել վիրավորանքը կամ զրպարտությունը, ուստի բոլոր այն դեպքերում, երբ անձը տեղեկանում է զրպարտության կամ վիրավորանքի մասին, վեց ամիսը լրանալուց հետո բաց է թողնում հայցային վաղեմության ժամկետը: Այսինքն՝ ՀՀ վճռաբեկ դատարանը սպառիչ պատասխանել է այն հարցին, որ վիրավորանքի և զրպարտության գործերով հայցային վաղեմության ժամկետը **6** ամիս է, որն իր մեջ ներառում է զանգվածային լրատվամիջոցին հերքման պահանջ ներկայացնելու համար նախատեսված մեկամսյա ժամկետը: Իրենք չեն վիճարկում, որ սույն գործով հայցային վաղեմության ժամկետն սկսվում է **23.06.2011թ.**-ից, որը տևում է մինչև **23.12.2011թ.** և ոչ թե՛ պատասխանողի կողմից վկայակառչված **02.08.2011թ.**: Հայցվոր Արման Ավետիսյանն ավելացրեց նաև, որ **11.06.2011թ.** հրապարակված «Կան բաներ, որ չեն ներվում», **15.06.2011թ.** հրապարակված «Արման Ավետիսյանը ստում է անհասկանալի պատճառներով» և **16.06.2011թ.** հրապարակված՝ «Ընտանեկան կապալին էին հարվածելու» հոդվածներն ինքն անձամբ կարդացել և ծանոթացել է, որից հետո **23.06.2011թ.** նամակ է ուղարկել Լևոն Բարսեղյանին՝ ակնկալելով հերքում կամ պատասխան հրապարակել: Մոտավորապես **27.06.2011թ.** կոնկրետ օրը չի հիշում, Լևոն Բարսեղյանը զանգահարել է իրեն և հարցրել է, թե ցանկանում է արդյոք ինքը, որ Լևոն Բարսեղյանն իր կողմից **23.06.2011թ.** ուղարկված նամակը հրապարակի որպես իր հասցեին հնչեցրած արտահայտությունների հերքում կամ պատասխան, ինքն էլ պատասխանել է, որ այո, ցանկանում է: Լևոն Բարսեղյանը նաև հարցրել է, թե արդյոք ուրիշ տեքստ կա, թե այդ նամակն է միայն, ինքն էլ պատասխանել է, որ ուրիշ տեքստ չկա, դա է: Ճիշտ է, այդ ժամանակ ինքն իր համաձայնությունը տվել, որ իր կողմից ուղարկված վերը նշված նամակը հրապարակվի որպես հերքում կամ պատասխան, սակայն չի ընկալել և չի պատկերացրել, որ դա

լինելու է որպես վերջնական հերքում կամ պատասխան: Լևոն Բարսեղյանի հետ ունեցած հեռախոսագրույցից ինքը վերջինիս կողմից որևէ ազդեցիկ, թշնամական վերաբերմունք չի նկատել և զգացել է Լևոն Բարսեղյանի պատրաստակամությունը, որ իր կողմից ինչ բովանդակությամբ պատասխան էլ որ ներկայացվեր, վերջինս պատրաստակամ էր այն հրապարակել: Ինքը Լևոն Բարսեղյանի հետ ծանոթացել է «Երկիր մեդիա» հեռուստաընկերությունում տեղի ունեցած հարցազրույցի ժամանակ, մինչ այդ լսել է **11.06.2011թ.** հրապարակված՝ «Կան բաներ, որ չեն ներվում» հոդվածի մասին, սակայն անձամբ կարդացած չի եղել հոդվածը, իսկ հարցազրույցից հետո, նույն օրը, երեկոյան գնացել և անձամբ կարդացել է հոդվածը: Հաջորդ հրապարակված հոդվածներին ինքը ծանոթացել է և դրանք կարդացել է հենց հրապարակման օրերին: Ճիշտ է, ինքը **23.06.2011թ.** նամակ է ուղարկել Լևոն Բարսեղյանին, որպեսզի վերջինս այն հրապարակի որպես հերքում կամ պատասխան, Լևոն Բարսեղյանն իր ուղարկած նամակը **30.06.2011թ.** հրապարակել է որպես պատասխան, սակայն դա իրեն չի գոհացրել, քանի որ պատասխանի հրապարակման հետ Լևոն Բարսեղյանը հրապարակել է նաև նախաբան, որտեղ նույնպես իր հասցեին զրպարտչական արտահայտություններ է նշել, մասնավորապես՝ նշել է, որ ինքը գործել է Էռնեսկյանի պատվերով, որից հետո ինքը որոշել է հայցադիմում ներկայացնել դատարան ընդդեմ Լևոն Բարսեղյանի: Ինքը Լևոն Բարսեղյանին ուղարկելով նամակը և ակնկալելով նրա կողմից հերքման կամ պատասխանի հրապարակում, այդ օրերին ամեն օր ստուգել է «Ժուռնալիստների Ասպարեզ ակումբ» ՀԿ-ի ինտերնետային կայքը, որպեսզի տեսնի, թե հերքում կամ պատասխան հրապարակվել է, թե ոչ, և հրապարակված պատասխանն ինքը տեսել և կարդացել է հրապարակումից մեկ կամ երկու օր անց՝ առավելագույնը՝ **02.07.2011թ.**: Հայտնեց նաև, որ ինքը նույնպես ներքուստ չի ցանկացել, որ Մինաս Ավետիսյանի որմնանկարները Գյումրիից տեղափոխվեն, սակայն որմնանկարների տեղափոխման վերաբերյալ առկա է եղել ՀՀ կառավարության որոշում, որի կատարումը հանձնարարվել է իրենց հիմնադրամին: Մինաս Ավետիսյանի որմնանկարները պատից անջատելուց և գործարանի պահեստում տեղավորելուց հետո գյումրեցի մտավորականների և հասարակական գործիչների ներկայացուցիչները, այդ թվում Վահան Թումասյանը, որոշել են, որ գործարանի պահեստի դռան վրա ևս մեկ կողպեք են կախելու, որպեսզի որմնանկարները այնտեղից չհանվեն: Չնայած նրան, որ ինքը հստակ գիտեցել է, որ գյումրեցիները նման բան անելու, այսինքն դռան վրա նոր կողպեք կախելու, որմնանկարները տեղափոխելուն խոչընդոտելու իրավունք չեն ունեցել, սակայն դրան չի առարկել, ոստիկանության օգնությանը չի դիմել, համաձայնվել է գյումրեցիների առաջարկի հետ և թույլ է տվել, որ պահեստի դռան վրա ևս մեկ կողպեք դրվի, որպեսզի որևէ վեճ կամ վիճաբանություն չլինի: Պահեստի դռան վրա նոր կողպեք կախելուց հետո գյումրեցիները բանալիների մեկ օրինակը հանձնել են իրեն՝ ասելով, որ վստահում են իրեն՝ Պահեստի դռան վրա նոր կողպեք կախելուց հետո ինքը գյումրեցիներին ասել է, որ նկարների հետ անընդհատ աշխատելու անհրաժեշտություն կա և խնդրել է, որ կողպեքի բանալիների մեկ օրինակը հանձնվի իրեն, նույնիսկ ասել է, որ ինքը Ջաջուռում է ապրում և առավոտ շուտ չի կարող լինել Գյումրիում և կողպեքի բանալիների մեկ օրինակը տվել է իր գործընկերոջը: Պահեստի դռան վրա նոր կողպեք կախելուց հետո և բանալիների մեկ օրինակն իրեն տալուց հետո ինքը ներկա գտնվող գյումրեցիների, այդ թվում՝ Վահան Թումասյանի, հետ հստակ պայմանավորվել է, որ առանց նրանց համաձայնության և առանց նրանց գիտության որմնանկարները պահեստից չեն հանվի և Երևան չեն տեղափոխվի, դրանից հետո իրենք շարունակել են զրուցել և ինքը ներկա գտնվողներին ասել է, որ որմնանկարները այդ վիճակում կարող են մնալ միայն երկու օր և նրանք միայն երկու օր ժամանակ ունեն, որ լուծեն որմնանկարները Գյումրիում պահելու հարցը: Ինքն այդ ժամանակ նկարները տանելու կամ գյումրեցիների վստահությունը չարաշահելու մտադրություն չի ունեցել և վստահեցրել է նրանց, որ որմնանկարները պահեստից չեն հանվելու և Երևան չեն տեղափոխվելու: Երբ գյումրեցիները իր առջև պահանջ են դրել որմնանկարները Գյումրիից չտեղափոխելու մասին, ինքը միշտ նրանց բացատրել է, որ նման որոշում կայացնողը ինքը չէ, այդ որոշումը կայացվել է ՀՀ մշակույթի նախարարության կողմից, այդ նույն որոշման համաձայն, որմնանկարների տեղափոխման և վերականգնման աշխատանքների պատվիրատու է հանդիսացել «Արմենիա օդանավակայաններ» ՓԲ ընկերությունը, իսկ որոշման

կատարումը հանձնարարվել է իրենց հիմնադրամին, այդ որոշման հիման վրա իրենց հիմնադրամը և «Արմենիա օդանավակայաններ» ՓԲ ընկերությունը գտնվել են պայմանագրային հարաբերությունների մեջ, և իրենց հիմնադրամը կատարել է նույն պայմանագրով պատվիրատու հանդիսացող «Արմենիա օդանավակայաններ» ՓԲ ընկերության պայմանագրային հանձնարարությունը: Այդ օրերին Գյումրու «Գավանումետր» գործարանի բակում ինքը հետախոսագրույց է ունեցել ՀՀ մշակույթի նախարարության ներկայացուցչի հետ և նրան ասել է, որ ինքը որմնանկարները Երեւան չի տեղափոխի, իսկ եթե նախարարության աշխատակիցներն ուզում են, ապա կարող են ուստիկաններ, զորք կամ ուղղաթիռ բերել և որմնանկարները տանել: Այդ օրերին գյումրեցի արվեստագետների և հասարակական գործիչների նախաձեռնող խմբի և ՀՀ մշակույթի նախարարության միջև բանակցություններ են վարվել՝ որմնանկարները Գյումրիում պահելու և Գյումրիում վերականգնելու հարցի շուրջ: Նույնիսկ կազմակերպվել է հանդիպում գյումրեցիների, իրենց հիմնադրամի, ՀՀ մշակույթի նախարարության և «Արմենիա օդանավակայաններ» ՓԲ ընկերության միջև, որի ընթացքում պետք է քննարկվեր որմնանկարները Գյումրիում թողնելու և Գյումրիում վերականգնելու հարցը: Մինչ այդ հանդիպումը ՀՀ մշակույթի նախարարությունից իրեն տեղեկացրել են, որ մեկ փոխշահավետ տարբերակ է ստեղծվել, որը կգոհացնի բոլոր կողմերին: Ինքը գյումրեցի արվեստագետների և հասարակական գործիչների նախաձեռնող խմբի ներկայացուցիչների հետ միասին գնացել է Երևան՝ այդ հանդիպմանը, սակայն իր հույսերը չեն արդարացել, քանի որ այնտեղ քննարկվել է ոչ թե կոնկրետ որմնանկարների վերականգնման հարցը, այլ յուրաքանչյուր կողմ իր շահերն է պնդել, որի ժամանակ անիրագործելի և անհավանական առաջարկներ և տարբերակներ են ներկայացվել, ինքն էլ զայրացել է, դուրս է եկել հանդիպման սրահից և առանց որևէ մեկին, այդ թվում՝ ՀՀ մշակույթի նախարարին կամ գյումրեցիների ներկայացուցիչներին, ասելու, զանգել է Գյումրիում գտնվող իր գործընկերներին և կարգադրել է, որ որմնանկարները տեղափոխեն Երևան, քանի որ արդեն որմնանկարները վնասվելու վտանգ է ստեղծվել, քանզի դրանք պատից անջատված վիճակում չէին կարող երկար ժամանակ մնալ: Որմնանկարները տեղափոխելու իր որոշման մասին տեղյակ չեն եղել ոչ գյումրեցի արվեստագետների և հասարակական գործիչների նախաձեռնող խմբի անդամները և ոչ էլ մշակույթի նախարարությունը, որմնանկարները տեղափոխելուն նշվածներից նույնպես որևէ մեկը ներկա չի եղել: Ճիշտ է, ինքը գյումրեցի արվեստագետների և հասարակական գործիչների նախաձեռնող խմբի անդամների հետ պայմանավորվածություն է ունեցել, որ առանց նրանց գիտության և համաձայնության որմնանկարները չեն տեղափոխվելու, և ճիշտ է, ինքը գտնում է, որ ինքը խախտել է իր այդ պայմանավորվածությունը և որմնանկարները նրանցից գաղտնի է տեղափոխել, սակայն ինքն այլ ելք չի ունեցել, քանի որ ՀՀ մշակույթի նախարարությունում տեղի ունեցած հանդիպման ժամանակ զգացել է, որ որմնանկարները վերականգնելու համար առաջարկվող գումարը չկա, և որմնանկարները վնասվելու մեծ ռիսկ է առաջացել: Երբ ինքը Գյումրիում գտնվող իր գործընկերներին հրահանգ է տվել որմնանկարները տեղափոխելու մասին, դրանից շուրջ 40 րոպե անց իրեն զանգել և տեղեկացրել են, որ որմնանկարները արդեն բեռնատարների վրա բարձրված վիճակում են և կարող են շարժվել: Դրանից հետո ինքը խոսել է ՀՀ մշակույթի փոխնարարի հետ, որոշել են, որ որմնանկարները տեղափոխվելու են Գյումրի-Մպիտակ-Երևան ավտոճանապարհով՝ նկատի ունենալով, որ Գյումրի-Երևան ճանապարհի Մարալիկ քաղաքի հատվածում ճանապարհի վնասված լինելու պատճառով որմնանկարները կարող են վնասվել: Բացի այդ, ինքը զանգել է նաև ուստիկանության Գյումրու բաժին և խնդրել է, որ ուստիկանության ուղեկցող ավտոմեքենաներ տրամադրեն, քանի որ մտավախություն է ունեցել, որ հնարավոր է տեղափոխման ժամանակ մարդկանց կողմից ինչ-որ խոչընդոտներ լինեն և որմնանկարները վնասվեն, սակայն նման բան նույնպես տեղի չի ունեցել:

3. Պատասխանողի իրավական դիրքորոշումը.

Պատասխանող Լևոն Բարսեղյանը և նրա ներկայացուցիչները հայցադիմումի պատասխաններ են ներկայացրել այն մասին, որ առարկում են ներկայացված հայցադիմումի դեմ ամբողջությամբ: Պատասխանող Լևոն Բարսեղյանը չի ընդունում դրանում նշված որևէ պահանջ, հայցադիմումում

ներկայացված պահանջներն անհիմն են, հիմնված են իր կողմից կատարված արտահայտությունների աղավաղված մեկնաբանությունների կամ իրականությանը չհամապատասխանող փաստական տվյալների վրա: Հայցվորի կողմից Դատարանին ներկայացված հայցադիմումում շարադրված փաստերը ընտրողաբար ներկայացված են հայցվորի դիրքորոշման հիմնավորումների պատրանք ձևավորելու համար և հանդիսանում են կամ փաստերի աղավաղում կամ այդ փաստերի նկարագրության աղավաղում: Հետևաբար, հայցադիմումի պատասխանով ներկայացնում են սույն քաղաքացիական գործի համար նշանակություն ունեցող փաստերի ամբողջական շարադրանքը՝ նկարագրված փաստի հիմնավորման հղումներով: Ստորև ներկայացվող փաստերի շարադրանքը ներառում է փաստերի այն ցանկը, որոնք հայցվորի կողմից կամ չէին ներկայացվել Դատարանին, կամ էլ դրանք ներկայացվել էին «խմբագրված» տարբերակով:

1.1. www.asparez.am կայքը գրանցված չէ որպես զանգվածային լրատվության միջոց, իսկ դրա տնօրինող «Ժուռնալիստների Ասպարեզ ակումբ» հասարակական կազմակերպությունը չի իրականացնում լրատվական գործունեություն: Այնուամենայնիվ, էթե հայցվորը շարունակում է պնդել իր դիրքորոշումն առ այն, որ «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպությունը լրատվական գործունեություն է իրականացնում, ապա պատասխանողն այդ պնդման դեմ առարկություն չունի:

1.2. 1.2. 28.04.2011թ. ՀՀ կառավարությունն իր թիվ **500**-Ա որոշմամբ որոշել է Գյումրիում գտնվող Մինաս Ավետիսյանի հեղինակած որմնանկարներից երկուսը անհատույց և անժամկետ հանձնել «Զվարթնոց» օդանավակայանին:

1.3. 1.3. 02.05.2011թ. Գյումրիում «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպության Խոսքի ազատության սրահում Գյումրու արվեստագետներն ու մտավորականները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ոլորտների ներկայացուցիչները կազմակերպել և անցկացրել են քննարկում նկարիչ Մինաս Ավետիսյանի հեղինակած որմնանկարները քաղաքից դուրս տանելու հարցի մասին: Քննարկման մասնակիցները բողոքել են և հայտնել, որ ավելի քան **500** ստորագրություն է հավաքվել ուղղված ՀՀ վարչապետին՝ որմնանկարները Գյումրիից տեղափոխելու որոշման դեմ: Պատասխանողը եղել է այդ քննարկման շուրջ **20** մասնակիցներից մեկը, և իր առաջարկներն է ներկայացրել որմնանկարները քաղաքում պահելու ռազմավարության մասին:

1.4. 1.4. 03.05.2011թ. Գյումրու տեխնիկական գրադարանի դահլիճում գյումրեցի արվեստագետներն ու մտավորականները կազմակերպել են մեկ այլ քննարկում՝ Մինաս Ավետիսյանի որմնանկարները քաղաքից տանելու մասին: Մասնակցել է մոտ **150** մարդ, մեծ մասը մշակույթի ոլորտի ներկայացուցիչներ: Պատասխանողը եղել այդ քննարկման մասնակիցներից մեկը և իր ելույթում առաջարկներ է ներկայացրել որմնանկարները քաղաքում պահելու ռազմավարության մասին:

1.5. 1.5. 13.05.2011թ. Գյումրեցի մշակույթի գործիչները գնացել են Երևան, ՀՀ կառավարության նստավայրի դիմաց պիկետ են անցկացրել՝ ընդդեմ Մինաս Ավետիսյանի հեղինակած որմնանկարները Գյումրիից դուրս տեղափոխելու որոշման և դրա ի կատար ածման: Այս հարցի առնչությամբ մինչև **10.06.2011թ.** ՀՀ մշակույթի նախարարությունում մի քանի անգամ եղել են հանդիպումներ մտահոգ անձանց՝ մշակույթի գործիչների հետ: Որպես այս հանդիպումների և քննարկումների արդյունք ՀՀ մշակույթի նախարարի և հանձնախմբի միջև կնքվել է համագործակցության մասին հուշագիր:

1.6. 1.6. 08.06.2011թ. Գյումրու մի շարք քաղաքացիների ջանքով խոչընդոտվում է Մինաս Ավետիսյանի նկարների տեղափոխումը Գյումրիից, որտեղ ներկա է գտնվել նաև հայցվորը: Վերջինս լրատվամիջոցներին տված իր հարցազրույցում, մասնավորապես և բառացիորեն ասել է. «Մենք որոշում կայացնող չենք, ... ես իմ կողմից, որպես «Մինաս Ավետիսյան» հիմնադրամի նախագահ, առաջարկ արեցի որպեսզի Երևանից գա ներկայացուցիչ, մշակույթի նախարարության ներկայացուցիչ, որը լիազորված լինի իրավաբանական հարցեր լուծելու: Մենք ունենք, կոնկրետ այս պահով, կոնկրետ պարտավորություններ «Հայկական ավիաընկերություններ» կազմակերպության

հետ, ի դեմս պարոն Էռնեսկյանի: Կա պայմանագիր և արվել է նյութական բավականին մեծ ներդրում: Մենք ունենք պարտավորություն պատվիրատուի նկատմամբ, և արվել է մեծ նյութական ներդրում: Հասկանալի ա: Եվ էդ նյութական ներդրման հարցը որոշում է կայացվում՝ (եթե) մնա Գյումրիում, էդ ծախսերը պիտի վերադարձվեն պատվիրատուին»: Ռեպորտաժի վերջում «Շիրակ կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ Վահան Թումասյանը կողպում է նկարի պահեստը իր կողպեքով: Փաստը հաստատվում է «Press.am», «Ազատություն» ռադիոկայանի, «Շանթ», «Գալա» հեռուստաընկերությունների համապատասխան տեսանյութերով:

1.7. 1.7. Նույն օրը Գյումրու «Գալվանումետր» գործարանի բակում Մինաս Ավետիսյանի պատերից անջատված որմնանկարները պահեստում են տեղավորվել, պահեստի դռանը գյումրեցիների կողմից առանձին կողպեք է կախվել և հայցվորի հետ պայմանավորվել են, որ առանց գյումրեցիների իմացության որմնանկարները Գյումրուց չեն տարվի: Նույն օրը, ժամը **06:50**-ի սահմաններում, առաջին որմնանկարը հանելուց անմիջապես հետո հայցվորը հեռախոսով խոսում է Երևանում մշակույթի նախարարության պաշտոնատար անձի հետ, բացատրում, որ ինքը չի կարող որմնանկարը տեղափոխել Երևան: Արման Ավետիսյանը պաշտոնատար անձին ասում է, որ թող գան, որոշեն անելիքը, ինքը չի կարող նկարները բերել Երևան, թող գան տանեն թեկուզ ինքնաթիռով: Խոսակցությանը ներկա են գտնվել գյումրեցի արվեստագետները և հասարակական գործիչներ: Որմնանկարը պահեստում տեղավորելուց հետո, պահեստի դուռը գյումրեցի հասարակական գործիչներից մեկը՝ «Շիրակ կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ Վահան Թումասյանը, կողպել է գյումրեցիներին պատկանող կողպեքով, դա եղել է Արման Ավետիսյանի իմացությամբ: Բանալին պահում են իրենց մոտ՝ որպես երաշխիք, որ չի խախտվի ձեռք բերված պայմանավորվածությունը և որևէ մեկն, առանց իրենց գիտության և մասնակցության, որմնանկարները չի տեղափոխի Երևան: Հայցվորը զանգվածային լրատվության միջոցներին տված հարցազրույցում, մասնավորապես, նշում է. «Առաջին հենց պարտավորությունը, նախ և առաջ, Զվարթնոց օդանավակայանի հետ է, քանի որ վճարող կողմը որմնանկարների հենց այդ կազմակերպությունն է: Այսինքն, մենք պարտավոր ենք կատարել նրանց տված առաջադրանքը տվյալ դեպքում»:

1.8. 1.8. Հաջորդ օրը՝ հունիսի 9-ին, տեղի է ունենում երկրորդ որմնանկարի հանումը և պահեստում տեղադրելու աշխատանքները: Նույն պահեստն է բերվել Գյումրու Էլեկտրատեխնիկական գործարանի պատից անջատված երկրորդ որմնանկարը: Մշակութային հանձնախմբի անդամները բացել են իրենց կախած կողպեքը, մյուս փականները բացել են հիմնադրամի ներկայացուցիչները և երկրորդ որմնանկարը նույնպես տեղավորել են պահեստարանում: Գյումրեցիները նորից փակել են փականը: Նույն օրվա մեջ Արման Ավետիսյանը գյումրեցիներից խնդրել է նրանց դրած կողպեքի բանալին՝ պատճառաբանելով, որ որմնանկարների հետ որոշ բան կա անելու՝ դրանք վնասվելուց փրկելու համար: Մշակութային հանձնախմբի անդամները, մասնավորապես՝ Վահան Թումասյանը, նրան է հանձնել բանալին՝ թարմացնելով պայմանավորվածությունը, թե առանց մշակութային հանձնախմբի անդամների համաձայնության նկարները չեն տարվի այդտեղից, բանալին հանձնելու ժամանակ Վահան Թումասյանը հայցվորին ասել է. «Մենք վստահում ենք քեզ, Արման»: Հայցվորը հավանության է արժանացրել իր և նախաձեռնող խմբի միջև ձեռք բերված պայմանավորվածությունը պահելու նկատմամբ արտահայտած վստահությանը: Մույն փաստը հաստատվում է «Շիրակ կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից կատարված տեսագրությամբ, «Ազատություն» ռադիոկայանի համապատասխան ռեպորտաժով՝ «Գյումրեցիները հետաձգեցին Մինասի որմնանկարի տեղափոխումը» անվանմամբ:

1.9. 1.9. **10.06.2011թ.** Երևանում տեղի են ունեցել բանակցություններ՝ որմնանկարները Գյումրիում վերականգնելու մասին: Այդ բանակցություններին մասնակցել են ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, մշակույթի փոխնախարար Արև Սամուելյանը, հայցվորը, Գյումրու մշակութային հանձնախմբի անդամներ Հասմիկ Մելքոնյանը, քանդակագործ Արթուր Գևորգյանը, «ՄԵԿ» հասարակական կազմակերպության նախագահ, Գագիկ Մանուկյանը՝ ՀՀ նկարիչների

միության Գյումրու մասնաճյուղի ղեկավար, գեղանկարիչ: Հանձնախմբին մշակույթի նախարարությունից հեռախոսով հրավիրել են խնդրո առարկա երկու որմնանկարների մասին քառակողմ քննարկման: Կողմերն առաջարկվել են լինել հետևյալները. Հանրապետության մշակույթի նախարար, «Մինաս Ավետիսյան» հիմնադրամ, «Արմենիա օդանավակայաններ» ՓԲ ընկերություն, Գյումրի քաղաքի պատմամշակութային անշարժ հուշարձանների ու շարժական արժեքների պահպանության հանձնախումբ:

1.10. 1.10. Նույն օրը, ժամը **12:30**-ին տեղի է ունեցել եռակողմ հանդիպում մշակույթի նախարարի հետ (բացակայել է «Արմենիա օդանավակայաններ» ՓԲ ընկերության ներկայացուցիչը): Նախարարը ասել է, թե ինքն է, որ չի կամեցել, որ «Արմենիա օդանավակայաններ» ՓԲ ընկերության ներկայացուցչի հետ հանձնախմբի որևէ անդամ հանդիպի: Քննարկվել են որմնանկարների վերականգնման երեք փուլերը Գյումրիում անցկացնելու հնարավորությունը (առաջին փուլ՝ պատի վրայի վերականգնողական աշխատանքները, երկրորդ փուլ՝ անջատումը պատից և սոսնձից մաքրումը, երրորդ փուլ՝ հենքի վրա տեղադրումը):

1.11. 1.11. Նույն օրը, ժամը **14:30**-ին, վերը նշված քննարկման վերջում մշակույթի նախարարը հանձնարարել է հայցվորին գրավոր ներկայացնել այն անհրաժեշտ տեխնիկական պայմանները, որոնք գյումրեցիների հանձնախմբի կողմն ապահովելու է հաջորդ երկու փուլերը Գյումրիում իրականացնելու համար:

1.12. 1.12. Նույն օրը, ժամը **15:00**-ի սահմաններում մշակույթի փոխնախարար Արև Սամուելյանը գյումրեցիներին առաջարկել է հայցվորի հետ, մինչև պայմանների շարադրումը, այցելել և ծանոթանալ Երևանի Ղռեր կոչված թաղամասում գտնվող, իր ասելով՝ լաբորատորիան, որի կոնկրետ տեղակայվածության և պայմանների մասին կհայտնեն համապատասխան վկաները:

1.13. 1.13. Նույն օրը, ժամը **15:30**-ի սահմաններում, փոխնախարարի նշած լաբորատորիա այցելության ժամանակ պարզվել է, որ այդ լաբորատորիան, որ երկրորդ հարկում է եղել, շատ նման է եղել լքված տարածքի, ոչ մի հատուկ պայման չի եղել, չի եղել մշտական ջուր, ջրահեռացման համակարգ, ինչն ուղղակի անխուսափելի է եղել երկրորդ փուլի աշխատանքների իրականացման համար: Հատակը պատված է եղել **13 x 4** մետր չափերով մանրատախտակով (ՃՈՍ): Դուռը եղել է փոքր, և գյումրեցիների այն հարցին, թե ինչպե՞ս է պատրաստի նկարը դուրս հանվելու (**13 x 4** մետր չափերով), հայցվորը բացատրել է, որ սենյակի պատը քանդելու են՝ որմնանկարները հանելու համար:

1.14. 1.14. Որից հետո, նույն օրը, մի քանի ժամ մշակույթի փոխնախարարի աշխատասենյակում հանձնախմբի անդամներ Հասմիկ Մելքոնյանը և Գարիկ Մանուկյանը, մշակույթի նախարարության աշխատակիցներ Սերժ Առաքելյանի և իրավաբանի հետ քննարկել են իրենց տեսած լաբորատորիայի վիճակը, վերականգնողական բոլոր փուլերը Գյումրիում անցկացնելու հնարավորությունները և այդ անելու համար տեխնիկական կարիքների ցանկը: Հայցվորը բացակայել է տվյալ քննարկումից: Նա լաբորատորիայից չի վերադարձել գյումրեցիների հետ, որոնց այնտեղ է տարած եղել իր ավտոմեքենայով: Գյումրեցիների այն հարցին, թե որտեղ է Արման Ավետիսյանը (հայցվորը), Սերժ Առաքելյանը պատասխանել է, թե նրա առողջական վիճակը վատացել է լաբորատորիա այցելելուց հետո, տարել են տուն, որ հանգստանա:

1.15. 1.15. Նույն օրը, ժամը **18:00**-ից **20:00**-ի սահմաններում մշակույթի նախարարությունում տեղի ունեցող քննարկմանը նորից միացել են մշակույթի փոխնախարար Արևհատ Սամուելյանը և Արթուր Գևորգյանը, ովքեր վերադարձել են Արթուր Գևորգյանի հետ «Երկիր Մեդիա» հեռուստաընկերությունում հաղորդմանը մասնակցելուց:

1.16. 1.16. Նույն օրը, ժամը **19:00**-ից **21:00**-ի սահմաններում Գյումրիից, Գավանումետր գործարանի պահեստից հայցվորի հանձնարարությամբ որմնանկարների փաթեթները Գյումրու հանձնախմբի անդամներից և Մշակույթի նախարարության պաշտոնյաներից գաղտնի տեղափոխվել են Երևան, չնայած այն բանին, որ պայմանավորվածություն է եղել այդ չանել՝ առանց փոխադարձ համաձայնության:

1.17. **1.17.** Նույն օրը, ժամը **20:30**-ին Գյումրու հանձնախմբի անդամները մեկնել են Գյումրի, մինչ այդ փոխնախարարի հետ պայմանավորվելով, որ հաջորդ օրը Գյումրիում որմնանկարները վերականգնելու կարիքների ցանկը ֆաքսով կամ այլ կերպ կուղարկվի գյումրեցիներին՝ առանց տեղյակ լինելու, որ հակառակ իրենց ունեցած պայմանավորվածության, որմնանկարներն արդեն տեղափոխվել են Գյումրիից, ինչի մասին ժամը **21:45**-ին մշակույթի փոխնախարար Արև Սամուելյանը հեռախոսով տեղեկացրել է հանձնախմբի անդամներին:

1.18. **1.18.** Հաջորդ օրը՝ **11.06.2011թ.**, ժամը **13:00**-ին, գյումրեցիների հետ հեռախոսազրույցի ժամանակ մշակույթի փոխնախարար Արև Սամուելյանը ասել է, որ հայցվորը նախարարին զեկուցել է, որ տեղափոխման որոշումն ինքնուրույն է կայացրել: Նախարարը վրդովվել է, բայց միջոցներ ձեռք չի առել:

1.19. **1.19. 11/06/2011թ.** տեղի ունեցածի վերաբերյալ հայտարարությամբ է հանդես եկել Գյումրու մշակութային հանձնախումբը, հետևյալ բովանդակությամբ. «Վերլուծելով Մինաս Ավետիսյանի «Թել են մանուկ» և «Երկանք» որմնանկարների Գյումրուց հափշտակելու և Երևան տեղափոխելու պատմությունը, հայտարարում ենք, որ. **1) 2011թ.** հունիսի **10**-ին Մշակույթի նախարարությունում Հանձնախմբի և մշակույթի նախարարության բանակցությունների ժամանակ Գյումրու Գալվանոմետր գործարանի պահեստից որմնանկարների հափշտակման գլխավոր պատասխանատուները ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանն ու իր տեղակալ Արևհատ Սամուելյանն են, չնայած այն հանգամանքին, որ Արևհատ Սամուելյանը պնդում է, թե «Մինաս Ավետիսյան» հիմնադրամի նախագահ Արման Ավետիսյանն առանց նախարարի իմացության են նկարները տեղափոխել Երևան: **2) Մշակույթի նախարարն** իր հեղինակության վերականգնման համար պարտավոր է հրապարակավ ցույց տալ իր վերաբերմունքը տեղի ունեցած կողոպուտի և կողոպուտիչների վերաբերյալ և վերականգնել իրերի վիճակը **2011թ.** հունիսի **10**-ի առավտովա դրությամբ: Միայն այդպիսի գործողության դեպքում հանձնախումբը կարող է լուրջ ընդունել նախարարի հետագա գործողությունները: Մինչ այդ հանձնախումբը խզում է իր աշխատանքային կապերը ՀՀ Մշակույթի նախարարության հետ, առոչինչ է հայտարարում **2011թ.** հունիսի **02**-ին ստորագրված համագործակցության հուշագիրը նախարարի հետ: **3) ՀՀ Կառավարությունը** պարտավոր է շուտափույթ և հիմնովին վերանայել Գյումրու պատմամշակութային ժառանգության նկատմամբ իր անհարգալից վերաբերմունքը, հասկանալ, որ Գյումրու գործարանների և շենքերի պատերին եղած մեծ վարպետների որմնանկարները Գյումրու և գյումրեցիների ունեցվածքն է: Այս հասարակ բաները չհասկանալու կամ դժվարությամբ հասկանալու դեպքում, մենք մեր հազարավոր համախոհների հետ ստիպված ենք լինելու ուսուցումներ կազմակերպել ՀՀ Կառավարության և, մանավանդ, մշակույթի նախարարի համար: **4) «Արմենիա օդանավակայաններ» ՓԲ ընկերության** տեր Է.Էրնեկյանը պարտավոր է գիտակցել, որ Մինաս Ավետիսյանի Գյումրուց հափշտակված որմնանկարները Չվարթնոցում կախելը պատիվ չի բերելու ոչ իրեն, ոչ իր գործարար համբավին: Պարոն Էրնեկյանը պիտի այդ որմնանկարները վերադարձնի Գյումրի քաղաքին, իսկ ավելի լավ կլինի՝ նվիրի, որովհետև քաղաքը **2007** թվականին **200.000** մլն դրամի հողի արժեք և գույքահարկ է զիջել Գյումրու օդանավակայանի համար: **5) Բոլոր նրանք, ովքեր սատարում են այս հայտարարությունը, պարտավոր են ջանքերը համադրելու հետևյալ գործողությունների համար՝ 1. ՀՀ կառավարությանն այս հասարակ բաները հասկացնելու համար, 2. մշակույթի նախարարի հրաժարականը ստանալու համար, 3. «Մինաս Ավետիսյան» հիմնադրամի նախագահ Արման Ավետիսյանին պատասխանատվության և հանրային պարսավանքի ենթարկելու համար, 4. այս նկարների փրկության դրամական և նյութական միջոցներ հայթայթելու համար:»**

1.20. **13.06.2011թ.**, հյուրընկալվելով «Շանթ» հեռուստաընկերությանը, հայցվորը հայտնել է, որ «Չվարթնոց» օդանավակայան տարվող մեկ որմնանկարի համար Էրնեկյանը վճարել է **35.000.000** ՀՀ դրամ՝ ոչինչ չնշելով երկրորդ որմնանկարի հետ արված աշխատանքների գնի մասին:

1.21. **14.06.2011թ.** տեղի ունեցած մամլո ասուլիսի ժամանակ հայցվորը Գյումրու մշակույթի հանձնախմբի անդամների հասցեին արտահայտվել է, որպես «ֆաշիստական դեմք ընդունածների» և «ֆաշիստական գործողություններ կատարողների»: Ասուլիսը լուսաբանվել է զանգվածային

լրատվամիջոցների կողմից և Գյումրու մշակույթի հանձնախմբի անդամների հասցեին հայցվորի որակումները հրապարակվել են:

1.22. Նույն օրը «Երկիր մեդիա» հեռուստաընկերությունում, ժամը **17:00-17:45** նկարահանված և ժամը **22:30-23:05** ցուցադրված հաղորդման մեջ, պատասխանելով պատասխանողի հարցին, թե տեղյակ է եղել արդյոք մշակույթի նախարարը որմնանկարները Գյումրուց Երևան տեղափոխելու մասին, հայցվորը երկու անգամ հայտարարել է, որ նախարարը տեղյակ չի եղել որմնանկարները Երևան տեղափոխելու իր մտադրության մասին: Նույն հաղորդման մեջ հայցվորը հայտնել է, որ նոր հաղորդումից **5** րոպե առաջ, են ծանոթացած եղել պատասխանողի հետ:

1.23. «Կան բաներ, որ չեն ներվում» հոդվածը «Ժողովուրդի «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպության www.asparez.am կայքում տեղադրվել է՝ **11.06.2011թ.**՝ այն բանից հետո, երբ հեղինակին՝ պատասխանողին, հայտնի է դարձել Գյումրի քաղաքի պատմամշակութային անշարժ հուշարձանների և շարժական արժեքների պահպանության հանձնախմբի հայտարարությունը, որ արել է հանձնախումբը ակումբի Խոսքի ազատության սրահում ժամը **13**-ին և, որ հիշատակված է սույն հայցադիմումի պատասխանի **1.19** կետում:

1.24. «Արման Ավետիսյանը ստում է անհասկանալի պատճառներով» հոդվածը «Ժողովուրդի «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպության www.asparez.am կայքում տեղադրվել է **15.06.2011թ.**:

1.25. «Ընտանեկան կապալին էին հարվածելու» հոդվածը «Ժողովուրդի «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպության www.asparez.am կայքում տեղադրվել է **16.06.2011թ.**, այդ հոդվածի հեղինակը պատասխանողը չէ:

1.26. **23.06.2011թ.** հայցվորը նամակ է ուղղել պատասխանողին՝ պահանջելով հերքում կամ պատասխան տպել վերը նշված հոդվածներում, ըստ իրեն, տեղ գտած զրպարտչական տեղեկությունների և վիրավորանքի վերաբերյալ: Նշված նամակը պատասխանողն ստացել է **27.06.2011թ.**:

1.27. Վերը նշված նամակը ստանալուն պես՝ **27.06.2011թ.**, պատասխանողն անմիջապես զանգահարել է հայցվորին, որի հետ հեռախոսակապի միջոցով պայմանավորվածություն է ձևաբերվել, որի համաձայն հենց ուղարկված տեքստն էլ պետք է տեղադրվեր՝ որպես պատասխան կամ հերքում: Հայցվորն իր բավարարվածությունն է հայտնել ուղարկված տեքստը կայքում, որպես հերքում կամ պատասխան, տեղադրելու պայմանավորվածության վերաբերյալ: Հեռախոսային խոսակցությունը տևել է մոտ երկու րոպե՝ ունենալով հետևյալ բովանդակությունը.

«Արման Ավետիսյան - Այո :

Լևոն Բարսեղյան - Բարև Ձեզ:

Ա.Ա. - Բարև Ձեզ:

Լ.Բ. - Պարոն Ավետիսյանի հե՞տ եմ խոսում:

Ա.Ա. - Այո:

Լ.Բ. - Պարոն Ավետիսյան Լևոնն է Բարսեղյան, Գյումրի քաղաքից, ժամանակ ունե՞ք:

Ա.Ա. - Հա, լսում եմ:

Լ.Բ. - Ուրեմն ես էսօր ստացել եմ Ձեր նամակը:

Ա.Ա. - Այո:

Լ.Բ. - Ավելի ճիշտ՝ ծրարը, մեջինը նամակ է, պահանջ է՝ չհասկացա, կարդացի ամբողջությամբ ես:

Ա.Ա. - Ահա...

Լ.Բ. - Ուրեմն, սրա մեջ հստակ չէ ձևակերպված Ձեր ուզածը կամ ասելիքը:

Ա.Ա. - Հստակ չէ՞:

Լ.Բ. - Չէ, հստակ չէ: Ասացե՛ք, ի՞նչ եք ուզեցել սրանով ասել:

Ա.Ա. - Այո...

Լ.Բ.- Որպեսզի իմանանք ինչ ... Դուք ուզում եք պատասխան տպագրել մեր կայքում(), Դուք ուզում եք պատասխանը դնեմ մեր կայքում, այս նամակն է (), թե՞ ուրիշ բան է, թե՞ չեք ուզում դրանք անենք՝ գնում ենք դատարան: Ո՞ր տարբերակն է, որ դուք ուզեցե՞լ եք ասել:

Ա.Ա.- Գնում ենք դատարան, միանգամից դատարան:

Լ.Բ.- Չէ, Դուք եք գրել, է, գրել եք, որ դատարանում կհանդիպենք, չէ՞, էդպես չէի՞ք գրել:

Ա.Ա.- Եթե, եթե չեք համաձայնում իմ ասածի հետ ...

Լ.Բ.- Չէ, բայց նայեք, Ձեր ասածը, էս տե՞քստն է, թե՞ ուրիշ տեքստի մասին է խոսքը:

Ա.Ա.- Էդ տեք ... ուրիշ տեքստ Ձեզ չի ուղարկվել, չէ՞:

Լ.Բ.- Էս, էս ինչ, որ ուղարկել եք, սա ուզում եք, որ մենք մեր կայքում հրապարակենք, որովհետև համարում եք ...

Ա.Ա.- Այո:

Լ.Բ.- ...որ վիրավորել, զրպարտել ենք, և ուզում եք, որ սա հերքման կամ պատասխանի տեսքով...

Ա.Ա.- Այո:

Լ.Բ.- Այ հենց էս տեքստը...

Ա.Ա.- Այո:

Լ.Բ.- Ուրիշ տեքստի մասին չէ՞ խոսքը, սա եմ ուզում ճշտել:

Ա.Ա.- Չէ, մենակ էդ տեքստն է:

Լ.Բ.- Մրա մասին է, խոսքը:

Ա.Ա.- Այո:

Լ.Բ.- Ես էս տեքստը, որևէ պրոբլեմ չունեմ տեղադրելու հետ, անկախ այն հանգամանքից՝ մենք հետո կհանդիպենք, թե չենք հանդիպի, դատարանում կլինի, թե ուրիշ տեղ կլինի: Էս տեքստը էս էսօր երեկոյան կամ ամենաուշը վաղը կտեղադրեմ նույն տեղում, որտեղ եղել են մյուս հրապարակումները:

Ա.Ա.- Խնդրեմ, դա Ձեր իրավունքն է:

Լ.Բ.- Դուք սրա էլեկտրոնային տարբերակը կարո՞ղ եք ներդրություն քաշել՝ ուղարկել, ինձ:

Ա.Ա.- Կարող ենք:

Լ.Բ.- Մեր հասցեն Ձեր նամակի վերևում Դուք գրել եք՝ էլեկտրոնային. levon@asparez.am, որպեսզի ես շարել չտամ, էլի, մերոնք չնստեն էս ամբողջը նորից..., կամ սկան եմ անել տալու, ինչը լավ չէ, էլի..., կուղարկե՞ք ինձ էլեկտրոնայինով:

Ա.Ա.- Խնդրեմ:

Լ.Բ.- Հա, որ..., հենց ուղարկեք երևի մի ժամ-ժամուկեսից կտեղադրվի արդեն սա:

Ա.Ա.- Էղավ, շատ լավ:

Լ.Բ.- Առայժմ, լավ եղեք:

Ա.Ա.- Առայժմ...»:

1.28. Խախտելով վերը նկարագրված հեռախոսային խոսակցության բովանդակությունից բխող պայմանավորվածությունը, հայցվորն այդպես էլ չի ուղարկել նամակի էլեկտրոնային տարբերակը: Պատասխանողն, ի վերջո չստանալով այդ նամակի էլեկտրոնային տարբերակը, **30.06.2011**թ. հանձնարարել է աշխատակիցներին համակարգչային շարվածքի հանձնել պատասխանողի **23.06.2011**թ. նամակը՝ համաձայն հայցվորի պահանջի, և **30.06.2011**թ. այն տեղադրվել է www.asparez.am կայքում՝ որտեղ և եղել են նախորդ հրապարակումները:

1.29. սույն քաղաքացիական գործի հիմք ծառայած հայցադիմումը Դատարան է ներկայացվել **04.08.2011**թ.:

Պատասխանողն իր առարկությունները հիմնավորելու համար ներկայացրել է հետևյալ ապացույցները.

1. ՀՀ Մշակույթի նախարարության (ի դեմս՝ ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի) և Գյումրու համայնքի մտավորականության ներկայացուցիչներից կազմված համակարգող խմբի (ի

դեմս՝ Հասմիկ Մելքոնյանի, Գարիկ Մանուկյանի և Արթուր Գևորգյանի) միջև **02.06.2011**թ. կնքված համագործակցության համաձայնագրի պատճեն՝ Գյումրի քաղաքի պատմամշակութային անշարժ հուշարձանների և շարժական արժեքների պահպանության մասին, ըստ որի նշված համաձայնագրի կնքման նպատակն է եղել Գյումրի քաղաքում պատմամշակութային անշարժ հուշարձանների և շարժական արժեքների պահպանման ու վերականգնման նպատակով իրականացվող գործընթացներում ներգրավել նաև Գյումրի քաղաքի մտավորականության և արվեստասեր հասարակության ներկայացուցիչներին, իսկ այդ աշխատանքների համակարգման նպատակով ստեղծել **6** անդամից կազմված հանրային հանձնախումբ, որից **4** անդամ՝ Գյումրու մտավորականության և **2** անդամ՝ ՀՀ մշակույթի նախարարության ներկայացուցիչներ:

2. Լևոն Բարսեղյանի կողմից «Ժուռնալիստների Ասպարեզ ակումբ» հասարակական կազմակերպության www.asparez.am ինտերնետային կայքում **11.06.2011**թ. հրապարակված «Կան բաներ, որ չեն ներվում» (Լևոն Բարսեղյանի պատասխանը Արման Ավետիսյանին) հոդվածը:

3. Ժուռնալիստների Ասպարեզ ակումբ» հասարակական կազմակերպության www.asparez.am ինտերնետային կայքում **15.06.2011**թ. հրապարակված «Արման Ավետիսյանը ստում է անհասկանալի պատճառներով» հոդվածը:

4. Նարեկ Լևոնյանի կողմից «Ժուռնալիստների Ասպարեզ ակումբ» հասարակական կազմակերպության www.asparez.am ինտերնետային կայքում **16.06.2011**թ. հրապարակված «Ընտանեկան կապալին էին հարվածելու» հոդվածը:

5. Արման Ավետիսյանի կողմից **23.06.2011**թ. Լևոն Բարսեղյանին ուղարկված գրության և ծրարի պատճենները: Ըստ նշված գրության, Արման Ավետիսյանը հայտնել է, որ **2011**թ. հունիսի **11**-ից մինչև **16**-ն ընկած ժամանակահատվածում Գյումրու «Ասպարեզ» ակումբի ինտերնետային կայքում հրապարակվել են մի շարք հոդվածներ, մասնավորապես՝ «Ընտանեկան կապալին էին հարվածելու», «Արման Ավետիսյանը ստում է անհասկանալի պատճառներով» և «Կան բաներ, որ չեն ներվում» վերանագրերով, որոնցով Մինաս Ավետիսյանի «Երկանք» և «Թե՛լ են մանում» որմնանկարների տեղափոխումը որակվել է կամայական և անօրինական գործողություններ: Նշված որմնանկարները համարվում են պետական սեփականություն, ըստ ՀՀ Սահմանադրության **89** հոդվածի **3**-րդ կետի, պետական սեփականության կառավարումն իրականացվում է ՀՀ կառավարության կողմից, որն էլ, իրականացնելով իր այդ գործառույթը, թիվ **500**-Ա որոշմամբ նշված որմնանկարների տեղափոխման հետ կապված գործառույթների իրականաումը վերապահել է «Մինաս Ավետիսյան» բարեգործական հիմնադրամին, որն էլ պատշաճ կարգով իրականացրել է ՀՀ կառավարության որոշման պահանջները: **2011**թ. հունիսի **16**-ին ինտերնետային կայքում հրապարակված «Ընտանեկան կապալին էին հարվածելու» հոդվածով միաժամանակ, բացի իրականությանը չհամապատասխանող, հանրության մեջ թյուրըմբռնում առաջացնող զրպարտչական տեղեկատվությունից, տեղ են գտել նաև իր անձի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող վիրավորական արտահայտություններ: Նշված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը, ինքն այդ արտահայտությունները գնահատում է որպես զրպարտչական գործողություններ իր անձի արժանապատվությունը ստորացնող և բարի համբավն արատավորող տեղեկություններ, որոնք իրենց մեջ պարունակում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի **1087.1** հոդվածով նախատեսված զրպարտության և վիրավորանքի հատկանիշներ: Ղեկավարվելով «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի **8, 9** հոդվածներով, պահանջել է մեկ շաբաթյա ժամկետում հերքել իր իրավունքները խախտող փաստացի անճշտությունները նույն «Ասպարեզ» ակումբին պատկանող ինտերնետային կայքով: Եթե լրատվական գործունեություն իրականացնողը՝ «Ասպարեզ ակումբ» հասարակական կազմակերպությունը կհրաժարվի տարածել հերքումը կամ պատասխանը կամ կխախտի դրանք տարածելու՝ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգն ու ժամկետը, ապա ինքն իրավունքների խախտման հիմքով, օրենքով սահմանված կարգով կդիմի դատարան՝ հերքումը տարածելու, իր պատասխանը հրապարակելու և բարոյական վնասը հատուցելու հայցով:

6. ՀՀ կառավարության **28.04.2011թ.** թիվ **500-Ա** որոշումը, որի 1-ին կետով թույլատրվել է «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամին «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲ ընկերության միջոցների հաշվին իրականացնել «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմ» ՊՈԱԿ-ին ամրացված՝ ՀՀ Շիրակի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված և պետական սեփականություն հանդիսացող Գյումրի քաղաքի «Էլեկտրատեխնիկական գործարան ՓԲ ընկերության նախկին ճաշարանի շենքում գտնվող՝ Մինաս Ավետիսյանի «Երկանք» և Գյումրի քաղաքի «Գալվանումետր» գործարան (Օսեգա)» ՓԲ ընկերության շենքում գտնվող «Թել են մանուս» որմնանկարների տեղափոխման և վերականգնման աշխատանքները:

7. «Ժուռնալիստների Ասպարեզ ակումբ» հասարակական կազմակերպության www.asparez.am ինտերնետային կայքում Արման Ավետիսյանի կողմից Լևոն Բարսեղյանին ուղղված **23.06.2011թ.** նամակի տեղադրման էջի արտատպվածքը, ըստ որի նշված նամակը հրապարակվել է «Ժուռնալիստների Ասպարեզ ակումբ» հասարակական կազմակերպության www.asparez.am ինտերնետային կայքում **30.06.2011թ.**, որպես նախաբան, հրապարակված է Լևոն Բարսեղյանի հայտարարությունը, որին հետևում է Արման Ավետիսյանի կողմից Լևոն Բարսեղյանին ուղղված **23.06.2011թ.** գրության ամբողջական տեքստը:

8. Թվով **608** անձանց կողմից ստորագրված բաց նամակը՝ ուղղված ՀՀ վարչապետին՝ հետևյալ բովանդակությամբ. «(...)Մենք՝ ներքոստորագրողներս, հաստատ վճռականություն ենք հայտնում, որ արվեստների և մշակույթի քաղաք Գյումրիում են պահպանվելու և ցուցադրելու մեր համրերկրացի, մեծանուն նկարիչ Մինաս Ավետիսյանի Գյումրիում կատարված որմնանկարները: Անկախ շինության սեփականության ձևից, որմնանկարները պատկանում են Գյումրի քաղաքին: Մենք գտնում ենք, որ առանց քաղաքի համաձայնության, հոգևոր մշակութային արժեքները տանելն անհարգալից վերաբերմունք է: Մեր բազմաթիվ հանդիպումները և պահանջը Գյումրու քաղաքապետից՝ Մինասի որմնանկարները վերականգնելու և մեր քաղաքում ցուցադրելու, աջակցություն են գտել քաղաքապետի կողմից, որը հաստատ հիմք է տալիս հայտարարելու, որ քաղաքը պատրաստ է համապատասխան դրամական միջոցներ տրամադրել՝ վերականգնելու, Գյումրիում պահպանելու և ցուցադրելու գյումրեցիների հպարտությունը հանդիսացող՝ Մինաս Ավետիսյանի պահպանված որմնանկարները:

10. Լազերային սկավառակ, որը պարունակում է Արման Ավետիսյանի և գյումրեցի մտավորականների միջև տեղի ունեցած բանակցությունների, հանդիպումների տեսաձայնագրությունները և հեռուստաընկերություններին տված հարցազրույցները:

Դատաքնության ժամանակ պատասխանող Լ.Բարսեղյանը հայցը չընդունեց, պնդեց ներկայացված հայցադիմումի պատասխանը, նրա ներկայացուցիչ Ա.Ջեյնալյանը հայտնեց նաև, որ իրավունքը խախտված անձն իր իրավունքների արտադատական և/կամ դատական պաշտպանության դիմելու իրավունք ունի: Սակայն այդ իրավունքը մրցակցում է իրավական կայունության՝ նույնքան կարևոր սկզբունքի հետ, և սրանց միջև հավասարակշռություն ապահովելու նպատակով՝ իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը օրենսդիրն իր հայեցողությամբ (հաշվի առնելով բազմազան գործոններ) որոշակիացրել է, այդ ժամանակահատվածը կոչվում է հայցային վաղեմության ժամկետ, որը նախատեսված է (տես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի **331-րդ** հոդվածը): Քաղաքացիաիրավական հարաբերություններում, որպես հայցային վաղեմության ընդհանուր ժամկետ է սահմանվել երեք տարին (տես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի **332-րդ** հոդվածը): Պահանջների որոշ տեսակների համար օրենսդիրն իր հայեցողությամբ իրավասու է սահմանվել հայցային վաղեմության ընդհանուր ժամկետի համեմատությամբ կրճատ կամ ավելի երկար հատուկ ժամկետներ (տես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի **333-րդ** հոդված, 1-ին մաս): Եթե նյութական իրավունքը պաշտպանելու իրավակարգավորումներում հայցային վաղեմության ժամկետ սահմանված չէ, ապա գործում է հայցային վաղեմության ընդհանուր՝ եռամյա ժամկետը: Դատարանն իր նախաձեռնությամբ

իրավասու չէ կիրառել հայցային վաղեմության ժամկետ և վերջինս իրավունքի պաշտպանության մասին պահանջը պետք է քննության ընդունի հայցային վաղեմության ժամկետը լրանալուց անկախ: Դատարանը հայցային վաղեմությունը կարող է կիրառել միայն վիճող կողմի դիմումով, որը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, բավարար պայման է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար (տես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335-րդ հոդվածը): ՀՀ-ում անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն այլ անձանց արատավորող գործողություններից պաշտպանելու հարաբերությունները կարգավորվում են, ի թիվս այլոց, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10871 հոդվածով: Այս իրավահարաբերությունների առանձնահատկություններով պայմանավորված օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10871 հոդվածի 13-րդ մասով սահմանել է հայցային վաղեմության ընդհանուր ժամկետի համեմատ կրճատ ժամկետ: Խնդրո առարկա իրավահարաբերություններում հայցային վաղեմության ժամկետը մեկ ամիս է՝ այն պահից, երբ անձին հայտնի է դարձել վիրավորանքի կամ զրպարտության մասին, սակայն ոչ ուշ, քան վիրավորանքի կամ զրպարտության պահից վեց ամսվա ընթացքում: Սա նշանակում է, որ անկախ անձին վիրավորանքի կամ զրպարտության մասին հայտնի դառնալու պահից, եթե հրապարակումից անցել է վեց և ավելի ամիս ժամանակ, դատարանը հայցը պետք է մերժի, եթե պատասխանողը հայցային վաղեմություն կիրառելու միջնորդություն է ներկայացրել: Պատասխանողի կողմից հայցային վաղեմության ժամկետ կիրառելու միջնորդություն ներկայացված լինելու պարագայում կարևոր է պարզել այն հանգամանքը, թե հայցվորը, երբ է իմացել իր իրավունքի հնարավոր խախտման մասին, քանի որ իմանալու պահից անմիջապես հետո սկսվում է հայցային վաղեմության ժամկետի հոսքը (տես՝ ՀՀ վճռաբեկ դատարանի 3-1558(ՎԴ)2007թ. գործով վճիռը, § 1-ին, 8-րդ մաս): Սույն գործով հայցային վաղեմության ժամկետ և դրանով նախատեսված իրավական հետևանքը կիրառելու նախապայմանները, փաստակազմերն առկա են, մասնավորապես՝ Արման Ավետիսյանը 23.06.2011թ. նամակ է հղել Լ.Բարսեղյանին պահանջելով հերքում կամ պատասխան տպագրել հրապարակումներում իր վերաբերյալ եղած «վիրավորանքի և զրպարտության մասին» հոդվածների դեմ: 23.06.2011թ. այն անվիճելի ժամանակն է, երբ հայցվորին հայտի է դարձել իր իրավունքի հնարավոր խախտման մասին: Լևոն Բարսեղյանը հայցվորի ուղարկած տեքստը հրապարակել է 30.06.2011թ.: Արման Ավետիսյանը 30.06.2011թ. «հերքման» մասին իմացել է ոչ ուշ՝ քան 02.07.2011թ., որպիսի փաստը հաստատվում է Դատարանում հարցուպատասխանի ժամանակ հայցվորի կատարած հայտարարությամբ: Արման Ավետիսյանը սույն գործի հիմքում ընկած հայցը Դատարան է ուղարկել՝ 04.08.2011թ., որը Դատարանում մուտքագրվել է 09.08.2011թ.: 11.10.2011թ. դատական նիստում Լևոն Բարսեղյանի անունից սույն գործով Դատարանին է ներկայացվել «Հայցային վաղեմություն կիրառելու մասին» դիմում: Սույն գործով հայցային վաղեմության ժամկետը լրացել է 23.07.2011թ. (եթե ոչ, ապա՝ 02.08.2011թ), սակայն հայցը ներկայացվել է 04.08.2011թ.: Ոստի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10871 հոդվածի 13-րդ մասով, 335 հոդվածով նախատեսված հայցային վաղեմության ժամկետի լրանալու հիմքով, սույն հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար բոլոր նախապայմաններն առկա են: Անձն ունի թե արտադատական, թե դատական պաշտպանության իրավունքի և իր հայեցողությամբ այդ պաշտպանության միջոցների միջև ընտրություն կատարելու իրավունք: Օրենսդիրն այս իրավահարաբերությունների առանձնահատկություններով պայմանավորված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10871 հոդվածի 10-րդ մասով բացառություն է սահմանել, եթե անձը մինչև դատարան դիմելը «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով պահանջել է հերքում և (կամ) իր պատասխանի հրապարակում, և լրատվական գործունեություն իրականացնողը կատարել է այդ պահանջը, չի կարող դրանից հետո դիմել դատական պաշտպանության միջոցի: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10871 հոդվածի 10-րդ կետով նախատեսված սահմանափակման իմաստը կայանում է նրանում, որ անձը չօգտվի իրավական պաշտպանության երկու հնարավորությունից, ինչը լրատվամիջոցին կղնի անհամաչափորեն ծանր բեռի տակ: Եթե անձը ստացել է հերքման կամ պատասխանի հնարավորություն, ապա համարվում է, որ նա արդեն ստացել է իրավական

պաշտպանության արդյունավետ և համարժեք միջոց, ուստի կարիք չկա նրան տրամադրել պաշտպանության հավելյալ հնարավորություն՝ դրամական փոխհատուցում հայցելու միջոցով, որի արդյունքում լրատվամիջոցները կհայտնվեն կրկնակի բեռի տակ: Այդ մտտեցումը համահունչ է ՀՀ սահմանադրական դատարանի **15.11.2011թ.** ՄԴՌ-997 որոշման **22-րդ** էջում արտահայտված իրավական դիրքորոշման հետ, ըստ որի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի **10871** հոդվածի **10-րդ** մասն «անձին ընդհուպ զրկում է նյութական փոխհատուցում պահանջելու հնարավորությունից, եթե նա մինչև դատարան դիմելը «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով պահանջել է հերքում և (կամ) իր պատասխանի հրապարակում, և լրատվական գործունեություն իրականացնողը կատարել է այդ պահանջը»: Սույն գործով հայցվորին՝ իր իրավունքի հնարավոր խախտման մասին հայտնի դառնալուց հետո, վերջինս Լևոն Բարսեղյանին **23.06.2011թ.** ներկայացրել է հրապարակումների դեմ պատասխան տպագրելու պահանջ: Հայցվորի՝ **23.06.2011թ.** գրությունն ավարտվում է այն հայտարարությամբ, որ եթե լրատվական գործունեություն իրականացնողը՝ «Ասպարեզ» ակումբը ՀԿ-ն կհրաժարվի տարածել հերքումը կամ պատասխանը կամ կխախտի դրանք տարածելու՝ ՀՀ «Զանգվածային լրատվության մասին» օրենքով սահմանված կարգն ու ժամկետը, ապա ինքը իրավունքների խախտման հիմքով օրենքով սահմանված կարգով կդիմի դատարան՝ հերքումը տարածելու, իր պատասխանը հրապարակելու և բարոյական վնասը հատուցելու հայցով: Պարզելու համար, թե հայցվորն ինչ պատասխան կամ հերքում է կամեցել, որ «լրատվական գործունեություն իրականացնողը» տարածի, Լ.Բարսեղյանը՝ հրապարակումների հեղինակը, նամակն ստանալուց անմիջապես հետո, նույն օրը՝ հունիսի **27-ին**, զանգահարել է Արման Ավետիսյանին: Հեռախոսագրույցի ընթացքում հայցվորը հստակ, աներկբա հաստատել է, որ ուղարկված տեքստն այն է, ինչ ինքն ուզում է, որպեսզի տպագրվի: Լևոն Բարսեղյանը պարտավորվել է կայքում նույնությամբ տեղադրել հայցվորի ուղարկած տեքստը, իսկ հայցվորը պարտավորվել է ուղարկել տեքստի էլեկտրոնային տարբերակը: Դատաքննության ընթացքում հայցորը հաստատեց, որ այդպիսի բովանդակությամբ հեռախոսագրույց է եղել իր և Լ.Բարսեղյանի միջև, ընդունեց հեռախոսագրույցի ու դրա՝ լրագրողի կողմից ներկայացված բովանդակության փաստերն ամբողջությամբ: Հայցվորը, թեև հայտարարեց, որ ինքը լավ չի հասկացել իր և Լ.Բարսեղյանի գրույցի իմաստը, փաստորեն թյուրիմացության մեջ է եղել: Սակայն կողմերի միջև տեղի ունեցած հեռախոսագրույցի սղագրությունից պարզ է, որ հայցվորը հստակորեն արտահայտել է իր կամքը՝ իրավական պաշտպանության հնարավոր երկու եղանակներից՝ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի **8-րդ** և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի **10871** հոդվածի **10-րդ** մասերով նախատեսված արտադատական պաշտպանության միջոցին դիմելու վերաբերյալ: Այս պնդումը հաստատվում է նաև այն փաստով, որ Ա.Ավետիսյանը **23.06.2011թ.** գրության էլեկտրոնային տեքստն ուղարկել է Լ.Բարսեղյանին, թեև այն վերջինիս կողմից տեխնիկական պատճառով չի ստացվել: ՀՀ վճռաբեկ դատարանը «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊ ընկերության, Թաթուլ Մանասերյանի ընդդեմ «Սկիզբ Մեդիա Կենտրոն» ՍՊ ընկերության՝ գրապարտությունը հերքելու և փոխհատուցում վճարելու պահանջների մասին թիվ ԵԿԴ/2293/02/10 քաղաքացիական գործով **27.04.2012թ.** կայացված որոշման մեջ հանգել է եզրակացության, որ «գրապարտության կամ վիրավորելու հետևանքով ծագող հարաբերությունը դադարում է նաև այն դեպքում, երբ լրատվական գործունեություն իրականացնողը տուժողի պահանջով հրապարակել է հերքում կամ տուժողի պատասխանը: Վճռաբեկ դատարանի նշված եզրահանգումը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի **10871** հոդվածի **10-րդ** կետի կանոնակարգումից, որի համաձայն՝ անձը չի կարող օգտվել նույն հոդվածի **7-րդ** և **8-րդ** կետերով սահմանված պաշտպանության միջոցներից, եթե նա մինչև դատարան դիմելը «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով պահանջել է հերքում և (կամ) իր պատասխանի հրապարակում, և լրատվական գործունեություն իրականացնողը կատարել է այդ պահանջը: **30.06.2011թ.** www.asparez.am կայքում հրապարակվել է Ա.Ավետիսյանի կողմից Լ.Բարսեղյանին ուղարկված տեքստն ամբողջությամբ, հետևաբար՝ առկա է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի **10871** հոդվածի **10-րդ** մասով նախատեսված սահմանափակումը: Ուստի սույն գործի հիմքում ընկած հայցը պետք է մերժվի՝ արտադատական կարգով վեճին լուծում տրված լինելու, այլ

կերպ ասած՝ վեճի բացակայության հիմքով: Անհասկանալի է, թե ում դեմ է հայցվորը դիմել՝ Լևոն Բարսեղյան քաղաքացու, ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի, թե www.asparez.am կայքի: Սույն գործի հիմքում ընկած հայցով Ա.Ավետիսյանը հանգել է եզրակացության, որ. ««Ասպարեզ» ակումբ չէ-ի հրապարակած հոդվածներով վիրավորանքի և զրպարտության արդյունքում արատավորվել է Արման Ավետիսյանի պատիվը, արժանապատվությունը և բարի համբավը»: Այդ եզրահանգման հիման վրա Ա.Ավետիսյանը պահանջել է և ոչ նյութական և նյութական հատուցում, մասնավորապես՝ «ա) պարտավորեցնել Պատասխանողին դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելուն հաջորդող կայքի հրապարակումներում հրապարակային ներողություն խնդրել «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Արման Ավետիսյանից և տեղադրել այդ նյութը www.asparez.am ինտերնետային կայքում, բ) պարտավորեցնել <http://www.asparez.am> ինտերնետային կայքում՝ երևացող վայրում, հրապարակել դատարանի վճիռը նշումով՝ «ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վճռով պարտավորեցվել է «ժուռնալիստների Ասպարեզ ակումբ» չէ-ի նախագահ Լևոն Բարսեղյանին ներողություն խնդրել «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Արման Ավետիսյանից զրպարտության և վիրավորանքի համար: Ներկայացվում է դատարանի վճռի ամբողջական տեքստը»: ««ժուռնալիստների Ասպարեզ ակումբ» չէ-ի նախագահ Լևոն Բարսեղյանից հոգուտ «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Արման Ավետիսյանի բռնագանձել **2.000.000** (երկու միլիոն) ՀՀ դրամ **500.000** (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ հայցվորի հասցեին հնչած վիրավորանքի և **1.500.000** (մեկ և կես միլիոն) ՀՀ դրամ հայցվորի հասցեին հնչած զրպարտության համար: «Դատարանին միջնորդում ենք նաև պարտավորեցնելու «ժուռնալիստների Ասպարեզ ակումբ» չէ-ի նախագահ Լևոն Բարսեղյանին հատուցելու «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Արման Ավետիսյանին պատճառված նյութական վնասը՝ **200.000** (երկու հարյուր հազար) ՀՀ դրամը՝ կապված հայցվորի իրավունքների պաշտպանության համար կատարված ծախսերի հետ: ... »: Ա.Ավետիսյանի իրավունքների ենթադրյալ խախտումը վերագրվում է Լ.Բարսեղյանի հեղինակած հոդվածներին, որոնք հրապարակվել են www.asparez.am ուստկայքում: www.asparez.am ուստկայքը պատկանում է «ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպությանը և չի հանդիսանում Լևոն Բարսեղյան ֆիզիկական անձինը: Լ.Բարսեղյանը լրատվական ուստկայքում հրապարակումներ է իրականացնում «ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպության թույլտվությամբ (որի կանոնադրությամբ լիազորված անձը՝ չէ նախագահ Նադեժդա Հակոբյանն է): Հայցապահանջի «բ)» ենթակետի պահանջը, թեև դրանում նշված չէ սուբյեկտ՝ հանդիսանում է «ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպությունը (եթե «ա)» ենթակետում նշված է ում պարտավորեցնել, ապա երկրորդում՝ ոչ): «ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպության կամքի բացակայության պարագայում պատասխանողը չի կարողանա www.asparez.am ուստկայքում հրապարակումներ իրականացնել: Հետևաբար՝ հայցի ոչ նյութական հատուցման պահանջների բավարարումը՝ Արմեն Ավետիսյանից խնդրված ներողությունը և հայցվորի համար հնարավոր բարենպաստ վճռի ամբողջական տեքստը www.asparez.am ուստկայքում հրապարակելը, միջամտություն է Լևոն Բարսեղյանից տարբերվող անձի՝ «ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպության իրավունքներին: Ընդհանրապես պատասխանողին կարելի է պարտավորեցնել ներողություն խնդրել, սակայն այդ ներողության և դա պարտավորեցնող դատական ակտի հրապարակումը www.asparez.am ուստկայքում կախված է «ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպության կամքից: Առանց «ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպության գործում որպես երկրորդ պատասխանող ներգրավվածության և գործին մասնակցության, նրա իրավունքների ու պարտականությունների մասին վճռի կայացման պարագայում, վերջինս կլինի ոչ օրինական ու պատճառ՝ դրա բեկանման համար: ««Ընտանեկան կապալին» էին հարվածելու» հոդվածի հեղինակը սույն գործով պատասխանողը չէ: Սույն գործով նախնական դատական նիստի ժամանակ հայցվոր

կողմն ընդունեց այդ փաստը: Նշված հոդվածի հեղինակը Նարեկ Լևոնյանն է, ուստի այդ հոդվածում Ա.Մինասյանին հնարավոր զրպարտող և/կամ վիրավորող արտահայտությունների համար Լևոն Բարսեղյանը պատշաճ պատասխանող չէ, և հայցն այդ մասով պետք է մերժվի: **15.06.2011թ.** «Արման Ավետիսյանը ստում է անհասկանալի պատճառներով» վերտառությամբ հրապարակման՝ «Հասկանալով, որ «Ասպարեզ» ակումբի քարը ծանր է, Արման Ավետիսյանին առաջին և վերջին անգամ հորդորում ենք լարախաղացության համար համապատասխան թաղամաս ընտրել» արտահայտությունը «Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ» հասարակական կազմակերպություն իրավաբանական անձի ընդունած հայտարարության հատված է, ուստի այդ հրապարակմամբ պարոն Ա.Ավետիսյանին հնարավոր զրպարտող և/կամ վիրավորող արտահայտությունների համար Լևոն Բարսեղյանը պատշաճ պատասխանող չէ և հայցն այդ մասով պետք է մերժվի: Գտնում են, որ հայցն ամբողջությամբ ենթակա է մերժման:

Վկա Վահան Թումասյանը ցուցմունք տվեց, որ հայցվոր Արման Ավետիսյանին հեռակա կարգով վաղուց ճանաչել է, բայց նրա հետ անձամբ ծանոթացել է Մինաս Ավետիսյանի որմնանկարները Գյումրիից տեղափոխելու գործընթացի հետ կապված՝ **2011թ.** հունիսի 5-ին: Իմանալով, որ ՀՀ կառավարության որոշման համաձայն, Մինաս Ավետիսյանի երկու որմնանկարները «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամի կողմից Գյումրիից տեղափոխվելու են, Գյումրու մի շարք մտավորականներով, այդ թվում՝ ինքը, նկարիչների միության նախագահ Գարիկ Մանուկյանը, նկարիչ Համբարձում Ղուկասյանը, հեռուստալրագրող Հասմիկ Մելքոնյանը, քանդակագործ Արթուր Գևորգյանը և մի շարք գյումրեցի լրագրողներ և անհատ քաղաքացիներ, դիմել են «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամի տնօրեն Արման Ավետիսյանին, նրա հետ բանակցություններ են վարել, փորձելով հասնել այն բանին, որ որմնանկարները մնան Գյումրիում, կամ գոնե դրանց վերականգնման աշխատանքները կատարվեն Գյումրիում: Իրենք առաջին անգամ Արման Ավետիսյանի հետ հանդիպել, ծանոթացել և զրուցել են Գյումրու «Գալվանոմետր» գործարանի բակում: Արման Ավետիսյանի հետ իրենց առաջին հանդիպումից և զրույցից հետո իրենց մոտ տպավորություն է ստեղծվել, որ Արման Ավետիսյանը կողմ է, որ Մինաս Ավետիսյանի որմնանկարները մնան Գյումրիում և որ նա օգնելու է իրենց՝ նախաձեռնող իմբին, որ ՀՀ մշակույթի նախարարության հետ բանակցություններ վարվեն, որ գոնե որմնանկարների վերականգնողական աշխատանքները Գյումրիում կատարվեն: Արման Ավետիսյանը նույնիսկ իրենց ներկայությամբ զանգել է ՀՀ մշակույթի նախարարություն և հեռախոսագրույց է ունեցել նախարարության աշխատակցի հետ՝ հայտնելով, որ ինքը որմնանկարները չի տեղափոխի Գյումրիից և այդ կապակցությամբ ուստիկանության կամ այլ կազմակերպության օգնությանը չի դիմի, իսկ եթե ՀՀ մշակույթի նախարարությունը ցանկանում է, կարող է գորք կամ ուստիկաններ, ինչպես նաև ուղղաթիռ բերել և որմնանկարները Գյումրիից տանել, իսկ ինքը դրանք չի կարող տեղափոխել Գյումրիից և չի էլ տեղափոխի, այդ ամենը տեսաձայնագրվել է հեռուստալրագրողների կողմից և հրապարակվել է: Բանակցությունների ժամանակ Արման Ավետիսյանն իրենց հույս է տվել, որ որմնանկարների վերականգնողական աշխատանքները հնարավոր է Գյումրիում կատարել, սակայն եթե դրա համար անհրաժեշտ պայմաններ ստեղծվեն, մասնավորապես՝ անհրաժեշտ է մեծ մակերեսով ավտոլվացման կայան, կամ նման շինություն, որպեսզի հնարավոր լինի որմնանկարներն առանձնացնել պատից, անհրաժեշտ է մեծ ավտոմեքենա և այլ: Իրենք հաշված ժամերի ընթացքում գտել են և ավտոլվացման կայանը և ավտոմեքենան և այդ մասին հայտնել են Արման Ավետիսյանին: Այդ ժամանակ Արման Ավետիսյանն իրենց հայտնել է, որ որմնանկարները երկար ժամանակ փաթաթված վիճակում պահեստում մնալ չեն կարող, դրանց վերականգնման ժամկետու շատ չպետք է ձգձգել, բայց կոնկրետ օր կամ ժամկետ չի նշել, նա ուղղակի ասել է, որ դրանք չի կարելի շաբաթներով այդ վիճակում թողնել, իսկ կոնկրետ երկու օրվա ժամկետ նա չի նշել: Մինաս Ավետիսյանի երկու որմնանկարները հանվել են **2011թ.** հունիսի 8-ից 10-ն ընկած ժամանակահատվածում, կոնկրետ օրը չի հիշում, առաջին նկարը պատից անջատվել և «Գալվանոմետր» գործարանի պահեստ է տեղափոխվել **2011թ.** հունիսի 8-ին, իսկ երկրորդ նկարը

պատից անջատվել է էլեկտրատեխնիկական գործարանի պահեստ է տեղափոխվել 1 կամ երկու օր հետո: Որմանակարները պատից անջատելուց և պահեստ տեխափոխելուց հետո Արման Ավետիսյանի հետ իրենք պայմանավորվել են, որ առանց իրենց իմացության որմանակարները չեն տեղափոխվելու, որից հետո ինքն իր նախաձեռնությամբ կողպեք է գնել, դրել է «Գալվանոմետր» գործարանի պահեստի դռան վրա և փակել է: Արման Ավետիսյանը և նրա գործընկերները խնդրել են, որ բանալիների մեկ օրինակը նրանց հանձնեն՝ պատճառաբանելով, որ որմանակարների հետ կապված անհետաձգելի աշխատանքներ կան անելու, բացի այդ իրենց գործիքներն այնտեղ են: Ինքը պահեստի կողպեքի բանալիների մեկ օրինակը **2011թ.** հունիսի **8-ին** տվել է Արման Ավետիսյանին, նա նույնիսկ իրենց հարցրել է, թե միթե իրենք Մինաս Ավետիսյանի նկարները նրա որդուն չեն վստահում: Իրենք հարցրել են, թե նա տղամարդու խոսք տալիս է, որ որմանակարներն առանց իրենց իմացության չեն տեղափոխվի, Արման Ավետիսյանն էլ վստահեցրել է, որ չեն տեղափոխի: Արման Ավետիսյանն իրենց հստակ ասել է, որ պահեստի դուռը որմանակարները Գյումրիից տեղափոխելու համար չի բացվի, դրանից հետո իրենք, վստահելով Արման Ավետիսյանին, պահեստի բանալիների մեկ օրինակը տվել են նրան: Այդ ամբողջ բանակցությունների ընթացքը, բոլոր մանրամասնություններով տեսաձայնագրվել է և տեսաձայնագրության մի հատվածը հրապարակվել է: Բացի այդ, Արման Ավետիսյանն իրենց խորհորդ է տվել, որ իրենց պայմանավորվածությունը պաշտոնական լինի, թող իրենք գրավոր նամակ ուղարկեն «Մինաս Ավետիսյան» բարեգործական հիմնադրամին և ՀՀ մշակույթի նախարարին, որ պարտավորություն են ստանձնում որմանակարների վերականգնման աշխատանքների համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու համար, իրենց նախաձեռնող խումբն էլ «Շիրակ Կենտրոն» հասարակական կազմակերպության անունից և վերջինիս կնիքով **2011թ.** հունիսի **8-ին** գրավոր նամակ է ձևակերպել՝ ուղղված «Մինաս Ավետիսյան» բարեգործական հիմնադրամի և ՀՀ մշակույթի նախարարին՝ այն բովանդակությամբ, որ որմանակարների վերականգնման աշխատանքները Գյումրիում արվեն: Իրենք նամակի մեկ օրինակը հանձնել են Արման Ավետիսյանին: Երբ ինքը պահեստի բանալիների մեկ օրինակը տվել է Արման Ավետիսյանին, իրենց նախաձեռնող խմբի աջակիցներից մի քանիսը դժգոհել են դրանից, ինքն էլ նրանց հանգստացրել, որ Արման Ավետիսյանը խոստացել է, որ որմանակարները Գյումրիից չեն տեղափոխվելու: Որմանակարները պահեստում դնելու և պահեստի դռան բանալիների մեկ օրինակն Արման Ավետիսյանին հանձնելուց մոտ երկու օր հետո, կոնկրետ օրը չի հիշում, իրենց նախաձեռնող խումբն իմացել է, որ որմանակարները պահեստից տարել են, իրենց այդ մասին հայտնել են իրենց գործընկերները, որոնք այդ օրը գտնվել են Երևանում՝ ՀՀ մշակույթի նախարարությունում և բանակցություններ են վարել՝ որմանակարները Գյումրիում վերանորոգելու հարցի շուրջ: Իրենց գործընկերներն այդ օրը միշտ իրենց հետ կապի մեջ են եղել, ժամը **18:00-ի** սահմաններում իրենց հայտնել են, որ բանակցությունները լավ են ընթանում, որ հնարավոր է համաձայնության գան, սակայն ժամը **19:30-ից 20:00-ն** ընկած ժամանակահատվածում զանգել և հայտնել են, որ որմանակարները Գյումրիից տեղափոխվել են Երևան: Դրանից հետո իրենք, որպեսզի համոզվեն, որ որմանակարները տեղափոխվել են, գնացել են «Գալվանոմետր» գործարանի պահեստ, պատուհանից նայել և տեսել են, որ որմանակարները չկան, հետո հարցուփորձ են արել գործարանի պահակին, որը հաստատել է որմանակարները տանելու փաստը: Մինաս Ավետիսյանի որմանակարները Գյումրիում պահելու հարցով իրենց խմբի նախաձեռնությամբ նաև բաց նամակ է ուղարկվել ՀՀ վարչապետին, այդ նամակին միանալու համար ստորագրահավաք է կատարվել, որին միացել են շուրջ **9.000** մարդ, այդ թվում՝ թղթային տարբերակով և էլեկտրոնային կայքերի միջոցով: Իրենց նախաձեռնող խումբը բաց նամակով ՀՀ վարչապետին դիմել է երկու անգամ, առաջին անգամն դիմել են նախքան կառավարության որոշումը՝ որմանակարները Գյումրիից տեղափոխելու մասին, երբ Գյումրու մտավորականները և մշակույթի գործիչներն իմացել են, որ խոսակցություն է գնում որմանակարները Գյումրիից տեղափոխելու մասին, իրենք բաց նամակով դիմել են ՀՀ կառավարությանը և խնդրել են, որ որմանակարները Գյումրիից չտեղափոխեն: Այդ նամակին միացել են **500-ից** ավել մարդիկ և ստորագրել են նամակը: Իսկ երկրորդ անգամ իրենք կառավարությանը դիմել են որմանակարները

տեղափոխելուց հետո և կառավարությունից խնդրել են, որ որմնանկարները վերադարձվեն: Այդ ժամանակ տեղի է ունեցել ստորագրահավաք, որին միացել է շուրջ **9.000** մարդ:

Վկա Նարեկ Թումասյանը ցուցմունք տվեց, որ կողմերին՝ հայցվոր Արման Ավետիսյանին և պատասխանող Լևոն Բարսեղյանին ճանաչում է, հայցվոր Արման Ավետիսյանի հետ ծանոթացել է Մինաս Ավետիսյանի որմնանկարները Գյումրիից տեղափոխելու գործընթացի հետ կապված: Ինքն աշխատում է «Շիրակ Կենտրոն» հասարակական կազմակերպությունում, ֆոտոլրագրող է: Մինաս Ավետիսյանի որմնանկարը գործարանի պատից անջատելու ժամանակ ինքը ներկա է եղել և այդ ընթացքում ֆոտոլուսանկարել և տեսաձայնագրել է տվյալ գործընթացը՝ «Շիրակ Կենտրոն» հասարակական կազմակերպության համար տեսանյութ և լուրերի թողարկում պատրաստելու նպատակով: Այդ գործընթացին ներկա են եղել Արման Ավետիսյանը, նրա հետ էլի մարդիկ են եղել, որոնց ինքը չի ճանաչել, ներկա են եղել «Շիրակ Կենտրոն» հասարակական կազմակերպության տնօրեն Վահան Թումասյանը և Գյումրեցի մի շարք արվեստագետներ: Իր կողմից տեսաձայնագրված նյութերն ամբողջությամբ տեղադրվել են իրենց կազմակերպության ինտերնետային կայքում: Մինաս Ավետիսյանի որմնանկարները պատից անջատելուց հետո դրանք փաթաթել են և տեղափոխել են գործարանի պահեստային մաս: Դրանից հետո ինքը, Վահան Թումասյանը և ներկա գտնվող Գյումրեցի արվեստագետները չեն ցանկացել, որ որմնանկարները Գյումրիից տեղափոխվեն և որպեսզի դրանք պահեստից չհանվեն, որոշել են գործարանի պահեստի դռան կողպեքը փոխել, Վահան Թումասյանը նոր կողպեք է բերել և կախել է պահեստի դռան վրա: Պահեստի դուռը նոր կողպեքով փակելուց հետո այդ նոր կողպեքի բանալիների մեկ օրինակը Վահան Թումասյանը հանձնել է Արման Ավետիսյանին և նրա հետ համաձայնություն է ձեռք բերվել, որ նա առանց իրենց, այդ թվում իր, Վահան Թումասյանի և Գյումրեցի արվեստագետների, համաձայնության, պահեստի դուռը չի բացելու և որմնանկարներն այնտեղից չի հանելու: Որմնանկարները պահեստից չհանելու վերաբերյալ ժամկետ Արման Ավետիսյանի կողմից չի նշվել, սակայն նա ասել է, որ որմնանկարներն այդ վիճակով կարող են մնալ մոտ երկու օր, որպեսզի չվնասվեն: Արման Ավետիսյանը խնդրել է կողպեքի բանալիների մեկ օրինակը նրան տալ, քանի որ որմնանկարների հետ նրանք աշխատանքներ ունեին կատարելու: Իրենք համաձայնվել և տվել են բանալու մեկ օրինակը, սակայն պայմանով, որ որմնանկարները պահեստից առանց իրենց համաձայնության չեն հանվելու: Այդ ամենի կապակցությամբ ներկա գտնվողներից որևէ մեկը դժգոհություն կամ առարկություն չի հայտնել: Այդ ընթացքում Արման Ավետիսյանը հեռախոսով հեռախոսագրույց է ունեցել ինչ-որ մեկի հետ, որի ժամանակ հայտնել է, որ ցանկանում է, որ որմնանկարները Գյումրիում մնան և Գյումրիում վերականգնվեն: Ինքը տեղյակ է նաև, որ Գյումրեցի արվեստագետների նախաձեռնությամբ ստորագրահավաք է տեղի ունեցել այն բանի համար, որ Մինաս Ավետիսյանի որմնանկարները Գյումրիից չտեղափոխվեն և Գյումրիում վերականգնվեն, հավաքվել է շուրջ **8.000** ստորագրություն, որոնք ուղարկվել են ՀՀ մշակույթի նախարարություն, ինքը նույնպես ստորագրել է այդ նախաձեռնության համար:

Վկա Արտաշես Կարապետյանը (Գյումրու քաղաքապետարանի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ) ցուցմունք տվեց, որ Արման Ավետիսյանին հեռակա կարգով ճանաչել է վաղուց, սակայն նրա հետ անձամբ ծանոթացել է **2011**թ. փետրվար ամսին՝ կապված Մինաս Ավետիսյանի՝ Գյումրիում գտնվող որմնանկարները պահպանելու, վերականգնելու հետ: Գյումրու քաղաքապետարանը նախաձեռնություն է հայտնել Մինաս Ավետիսյանի որմնանկարներից վերականգնելու, ինքն այդ կապակցությամբ Արման Ավետիսյանին հրավիրել է քաղաքապետարան և նրա հետ քննարկել են նշված հարցերը: Այդ ժամանակ Գյումրու քաղաքապետարանը շահագրգռված է եղել վերականգնել Մինաս Ավետիսյանի չորս որմնանկարները, այդ թվում այն երկուսը, որոնք տեղափոխվել են օդանավակայան: Այդ հանդիպումների, քննարկումների ընթացքում արդեն խոսակցություն է եղել, որ այդ չորս որմնանկարներից երկուսը Գյումրիում մնալ չեն կարող, քանի որ արդեն երրորդ կողմի հետ պայմանավորվածություն կա, որ դրանք տեղափոխվելու են Երևան: Այդ մանրամասնություններն ինքը չի հիշում, քանի որ բավականին ժամանակ է անցել, սակայն այն ժամանակ մտածել են, որ

իրենք կկարողանան հասնեն այն բանին, որ բոլոր որմնանկարներն էլ մնան Գյումրիում, բայց արդյունքում այնպես է ստացվել, որ կառավարության որոշմամբ որոշվել է, որ երկու որմնանկարները տեղափոխվելու են Երևան: Այդ բանակցությունների ժամանակ «Մինաս Ավետիսյան» բարեգործական հիմնադրամի ներկայացուցիչները և Արման Ավետիսյանն իրենց միշտ հասկացնում էին, որ արդեն ուշ է և հնարավոր չէ բոլոր չորս որմնանկարները պահել Գյումրիում: Ինքն իմանալով Մինաս Ավետիսյանի երկու որմնանկարները Գյումրիից տանելու կառավարության մտադրության մասին լուրերը, գնացել է «Ժուռնալիստների Ասպարեզ ակումբ» ՀԿ, խնդրել է տրամադրել ակումբի սրահը, հավաքել է լրատվության ներկայացուցիչների, Գյումրու մտավորականության և արվեստագետների ներկայացուցիչների և կոչ է արել, որ համախմբվեն և պայքարեն, որպեսզի Մինաս Ավետիսյանի երկու որմնանկարները Գյումրիից չտեղափոխվեն: Այդ ասուլիսը եղել է Մինաս Ավետիսյանի որմնանկարները Գյումրիից տեղափոխելու վերաբերյալ ՀՀ կառավարության **28.04.2011թ.** որոշումից հետո՝ **2011թ.** մայիս ամսին, բայց այդ ժամանակ իրենց մեջ այն համոզմունքն է եղել, որ կառավարության նշված որոշումը դեռևս վերջնական չէ, և դեռևս հնարավոր է պայքարել, որպեսզի Մինաս Ավետիսյանի որմնանկարները մնան Գյումրիում: Ասուլիսը կազմակերպելուց հետո ինքն իմացել է, որ Գյումրիում ստորագրահավաք է տեղի ունեցել՝ Մինաս Ավետիսյանի որմնանկարները Գյումրիում պահելու նպատակով, այդ նպատակով ստեղծվել է նախաձեռնող խումբ, ստորագրահավաքին միացել են Գյումրիում գործող տարբեր կառույցներ, տարբեր կազմակերպություններ, քննարկումներին սկսել է մասնակցել նաև ՀՀ կառավարությունը, այդ կապակցությամբ կազմվել է բաց նամակ ուղղված ՀՀ վարչապետին, որի կապակցությամբ հավաքվել է հազարավոր ստորագրություն: Ինքը փաստաթղթի տակ դրված ստորագրությունները չի հաշվել, սակայն տեսել է ստորագրված փաստաթղթերի ամբողջ փաթեթը և համոզված է, որ այնտեղ եղել է ոչ թե **500**, այլ առնվազն **5.000** ստորագրություն: Այդ գործընթացի մասին ինքը միշտ տեղեկացված է եղել, տեսել է ստորագրված փաստաթղթերը, ինքը նույնպես ստորագրել է այդ փաստաթուղթը, **48** համարի տակ իր ստորագրությունն է:

4. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

1) ՀՀ կառավարության **28.04.2011թ.** թիվ **500-Ա** որոշման **1-ին** կետով թույլատրվել է «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամին «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲ ընկերության միջոցների հաշվին իրականացնել «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմ» ՊՈԱԿ-ին ամրացված՝ ՀՀ Շիրակի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված և պետական սեփականություն հանդիսացող Գյումրի քաղաքի «Էլեկտրատեխնիկական գործարան ՓԲ ընկերության նախկին ճաշարանի շենքում գտնվող՝ Մինաս Ավետիսյանի «Երկանք» և Գյումրի քաղաքի «Գավլանումետր» գործարան (Օմեգա)» ՓԲ ընկերության շենքում գտնվող «Թել են մանուս» որմնանկարների տեղափոխման և վերականգնման աշխատանքները:

2) ՀՀ Մշակույթի նախարարության (ի դեմս՝ ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի) և Գյումրու համայնքի մտավորականության ներկայացուցիչներից կազմված համակարգող խմբի (ի դեմս՝ Հասմիկ Մելքոնյանի, Գարիկ Մանուկյանի և Արթուր Գևորգյանի) միջև **02.06.2011թ.** կնքվել է համագործակցության համաձայնագիր՝ Գյումրի քաղաքի պատմամշակութային անշարժ հուշարձանների և շարժական արժեքների պահպանության մասին, ըստ որի նշված համաձայնագրի կնքման նպատակն է եղել Գյումրի քաղաքում պատմամշակութային անշարժ հուշարձանների և շարժական արժեքների պահպանման ու վերականգնման նպատակով իրականացվող գործընթացներում ներգրավել նաև Գյումրի քաղաքի մտավորականության և արվեստասեր հասարակության ներկայացուցիչներին, իսկ այդ աշխատանքների համակարգման նպատակով ստեղծել **6** անդամից կազմված հանրային հանձնախումբ, որից **4** անդամ՝ Գյումրու մտավորականության և **2** անդամ՝ ՀՀ մշակույթի նախարարության ներկայացուցիչներ:

3) «Քաղ. մշակույթի և համաձայնությունների զարգացման «Շիրակ Կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից **08.06.2011թ.** գրություն է ուղարկվել «Մինաս Ավետիսյան» բարեգործական հիմնադրամի նախագահ Արման Ավետիսյանին այն մասին, որ ի կատարումն ՀՀ կառավարության **28.04.2011թ.** թիվ **500-Ն** որոշման՝ «Թել են մանում» և «Երկանք» որմնանկարների վերականգնման և տեղափոխման հետ կապված ստեղծված հասարակական կարծիքը, բանակցությունները մշակույթի նախարարի, ինչպես նաև պարոն Էրնեկյանի հետ և Գյումրու շուրջ **1000** մտավորականների առաջարկությունները հաշվի առնելով, «Շիրակ Կենտրոն» հասարակական կազմակերպությունը խնդրել է Արման Ավետիսյանի միջնորդությունը աշխատանքային խմբին՝ վերականգնողական աշխատանքների բոլոր փուլերն իրականացնել Գյումրիում: Նշվել է նաև, որ իրենց առաջարկը հնարավորություն կտա հասարակական քննարկումների միջոցով վիճահարույց խնդիրը մտցնել բնականոն հուն: Տվյալ գրության մեջ նշված է նաև, որ նամակ-ուղերձին միացել են նաև մտավորականներ, և գրությունն ստորագրած է նաև Գյումրի քաղաքի պատմամշակութային անշարժ հուշարձանների և շարժական արժեքների պահպանության հանձնախմբի անդամներ Գարիկ Մանուկյանի, Համբարձում Ղուկասյանի, Հասմիկ Մելքոնյանի և Արթուր Գևորգյանի կողմից:

4) «Մինաս Ավետիսյանի» բարեգործական հիմնադրամի նախագահ Արման Ավետիսյանի կողմից «Քաղ. մշակույթի և համաձայնությունների զարգացման «Շիրակ Կենտրոն» հասարակական կազմակերպությանը, Գյումրի քաղաքի պատմամշակութային անշարժ հուշարձանների և շարժական արժեքների պահպանության հանձնախմբին և ՀՀ մշակույթի նախարարին գրություններ է ուղարկել այն մասին, որ «Մինաս Ավետիսյան» բարեգործական հիմնադրամը և գլխավոր վերականգնող Ֆաբրիցիո Յակոպինին ունեն պայմանագրից բխող խիստ ժամկետային և ֆինանսական պարտավորություններ, որոնց պատշաճ իրականացման համար անհրաժեշտ է՝ **1)** առանց հիմնադրամի ղեկավարության թույլտվության, արգելել կողմնակի անձանց մուտքը տվյալ պահին բացօթյա արվեստանոց հանդիսացող տարածք, հակառակ դեպքում կխաթարվի աշխատանքային գործընթացը, որը բացասական կանդրադառնա ազգային արժեք հանդիսացող որմնանկարի վերականգնման որակական հատկանիշների և գեղագիտական տեսքի վրա, **2)** ելնելով նախկինում կիրառված և հաջողված փորձից, անթույլատրելի են համարում տեխնիկական և տեխնոլոգիական պրոցեսների հերթականության որևէ խախտում, ուստի անհրաժեշտ են համարում աշխատանքները շարունակել Երևանում, քանի որ նախատեսվածի համաձայն, Երևանում են իրականացվել հետևյալ անհրաժեշտ գործողությունները՝ ա) նախապատրաստվել է **13,4 x 3,40** հենք՝ բաղկացած **15** առանձին մասերից և ամրացված Իտալիայից ներմուծված բավականին մեծ արժեք և հատուկ օգտագործման պահանջներ ունեցող նյութերով և որի տեղափոխումը կրերի հենքի դեֆորմացմանը, իսկ ժամկետի պահպանման դեպքում՝ հենքի և ամրակների անջատմանը, բ) նախապատրաստված են նաև Իտալիայից ներմուծված համալիր նյութերի խառնուրդները, որոնց ժամկետների և ջերմային պայմանների խաթարումը կազդի վերջիններիս որակական և տեխնիկական ցուցանիշների վրա: Վերականգնող Ֆաբրիցիո Յակոպինին փաստում է, որ որմնանկարների վերականգնման գործընթացը տեսականորեն հնարավոր է իրականացնել Գյումրիում, սակայն դրանց գործնական իրականացումը՝ բխող վերոհիշյալ կետերից, պրակտիկորեն անհնար է: Ազգային մշակութային ժառանգության պահպանման շահերից է բխում, որպեսզի խստորեն պահպանվեն իտալական մեթոդիկայով նախատեսված տեխնիկական և տեխնոլոգիական գործողությունների հերթականությունը:

5) Թվով **608** անձանց կողմից ստորագրված բաց նամակ է ուղղվել ՀՀ վարչապետին՝ հետևյալ բովանդակությամբ. «(...)Մենք՝ ներքոստորագրողներս, հաստատ վճռականություն ենք հայտնում, որ արվեստների և մշակույթի քաղաք Գյումրիում են պահպանվելու և ցուցադրելու մեր համրերկրացի, մեծանուն նկարիչ Մինաս Ավետիսյանի Գյումրիում կատարված որմնանկարները: Անկախ շինության սեփականության ձևից, որմնանկարները պատկանում են Գյումրի քաղաքին: Մենք գտնում ենք, որ առանց քաղաքի համաձայնության, հոգևոր մշակութային արժեքները տանելն անհարգալից վերաբերմունք է: Մեր բազմաթիվ հանդիպումները և պահանջը Գյումրու քաղաքապետից՝ Մինասի որմնանկարները վերականգնելու և մեր քաղաքում ցուցադրելու,

աջակցությունն են գտել քաղաքապետի կողմից, որը հաստատ հիմք է տալիս հայտարարելու, որ քաղաքը պատրաստ է համապատասխան դրամական միջոցներ տրամադրել՝ վերականգնելու, Գյումրիում պահպանելու և ցուցադրելու գյումրեցիների հպարտությունը հանդիսացող՝ Մինաս Ավետիսյանի պահպանված որմանկարները:

6) Լևոն Բարսեղյանի կողմից «Ժուռնալիստների Ասպարեզ ակումբ» հասարակական կազմակերպության www.asparez.am ինտերնետային կայքում **11.06.2011**թ. հրապարակվել է «Կան բաներ, որ չեն ներվում» (Լևոն Բարսեղյանի պատասխանը Արման Ավետիսյանին) հոդվածը, որում նշվել են հետևյալ արտահայտությունները. «www.slaq.am կայքը հունիսի **11**-ին, ժամը **13:17**-ին հրապարակել է հետևյալը. «Մինասի որմանկարները Գյումրիից Երևան են տեղափոխվել, բայց ոչ գաղտնի»: «Նշենք, որ «Ասպարեզ» ակումբի նախագահ Լևոն Բարսեղյանը կայքերից մեկին հայտարարել էր, թե Մինասի որմանկարները Երևան են տեղափոխվել գաղտնի: Ի՞նչ է նշանակում թաքուն են տեղափոխվել: Հորս երկու որմանկարները Գյումրիից Երևան են տեղափոխվել օրը ցերեկով, երկու բեռնատարով»: «Եվ, ի դժբախտություն իրեն, այդ կարող են ասել ու ասելու են **2** տարեկաններից սկսած՝ վերջացրած զառամյալներով, ասվելու է քանի դեռ ինքը ողջ է, մինչև իր կյանքի վերջն ինքը լսելու է այս ու այն կողմից, որ «թռավ իր պայմանավորվածությունից», լսելու է պատմություններ, թե ինչու էր քաղաքում խոսքը խոսք և ինչու էր մարդու խոսքը թանկ միլիոնավոր դոլարներ արժեցող բոլոր որմանկարներից, կլսի,, թե ինչպես էին գյումրեցիք հին օրերում վարվում այդօրինակ կերպարների հետ. վզից գդալ-չանգյալ էին կախում, որ թյուրիմացություններ չլինեին...»: «Այս պատմությունը տեղի ունեցավ մի ստից պատճառով. գյումրեցի արվեստագետներն ու մշակույթի գործիչները մտածել են, թե տղամարդու հետ գործ ունեն, վստահել են նրա խոսքին ու պահակներ չեն շարել նկարների պահեստարանի դարպասների մոտ, այլապես ոչինչ հասնել չէին կարողանա գործարանի բակից»: «Արման Ավետիսյանի լեզվամտածողությունը մատնում է նրա «անձնվեր» էությունը. ասում է. «... Հորս երկու որմանկարները...»: Էս եսակենտրոն քաղաքացին մինչև հիմա գլխի չի ընկել, որ որմանկարները, որոնց մասին խոսում ենք, հորը չեն, և վաղուց է՝ ինչ հորը չեն»»:

7) «Ժուռնալիստների Ասպարեզ ակումբ» հասարակական կազմակերպության www.asparez.am ինտերնետային կայքում **15.06.2011**թ. հրապարակվել է «Արման Ավետիսյանը ստում է անհասկանալի պատճառներով» հոդվածը, որում նշվել են հետևյալ արտահայտությունները. «...Հասկանալով, որ «Ասպարեզ» ակումբի քարը ծանր է, Արման Ավետիսյանին առաջին և վերջին անգամ հորդորում ենք լարախաղացության համար համապատասխան թաղամաս ընտրել...»:

8) Նարեկ Լևոնյանի կողմից «Ժուռնալիստների Ասպարեզ ակումբ» հասարակական կազմակերպության www.asparez.am ինտերնետային կայքում **16.06.2011**թ. հրապարակվել է «Ընտանեկան կապալին էին հարվածելու» հոդվածը, որում նշվել են հետևյալ արտահայտությունները. «...Օրերս, արդարացնելով կառավարության որոշումը և որմանկարների տեղափոխումը, որից, չենք կասկածում, Մինաս Ավետիսյանի որդին բավական ֆինանսական եկամուտ է ստացել...»:

9) Արման Ավետիսյանը **23.06.2011**թ. Լևոն Բարսեղյանին նամակ է ուղարկել, որով հայտնել է, որ **2011**թ. հունիսի **11**-ից մինչև **16**-ն ընկած ժամանակահատվածում Գյումրու «Ասպարեզ» ակումբի ինտերնետային կայքում հրապարակվել են մի շարք հոդվածներ, մասնավորապես՝ «Ընտանեկան կապալին էին հարվածելու», «Արման Ավետիսյանը ստում է անհասկանալի պատճառներով» և «Կան բաներ, որ չեն ներվում» վերանագրերով, որոնցով Մինաս Ավետիսյանի «Երկանք» և «Թել են մանուս» որմանկարների տեղափոխումը որակվել է կամայական և անօրինական գործողություններ: Նշված որմանկարները համարվում են պետական սեփականություն, ըստ ՀՀ Սահմանադրության **89** հոդվածի **3**-րդ կետի, պետական սեփականության կառավարումն իրականացվում է ՀՀ կառավարության կողմից, որն էլ, իրականացնելով իր այդ գործառնությունը, թիվ **500**-Ա որոշմամբ նշված որմանկարների տեղափոխման հետ կապված գործառնությունների իրականաումը վերապահել է «Մինաս Ավետիսյան» բարեգործական հիմնադրամին, որն էլ պատշաճ կարգով իրականացրել է ՀՀ կառավարության որոշման պահանջները: **2011**թ. հունիսի **16**-ին ինտերնետային կայքում

հրապարակված «Ընտանեկան կապալին էին հարվածելու» հոդվածով միաժամանակ, բացի իրականությանը չհամապատասխանող, հանրության մեջ թյուրըմբռնում առաջացնող զրպարտչական տեղեկատվությունից, տեղ են գտել նաև իր անձի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող վիրավորական արտահայտություններ: Նշված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը, ինքն այդ արտահայտությունները գնահատում է որպես զրպարտչական գործողություններ՝ իր անձի արժանապատվությունը ստորացնող և բարի համբավն արատավորող տեղեկություններ, որոնք իրենց մեջ պարունակում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի **1087.1** հոդվածով նախատեսված զրպարտության և վիրավորանքի հատկանիշներ: Ղեկավարվելով «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի **8, 9** հոդվածներով, պահանջել է մեկ շաբաթյա ժամկետում հերքել իր իրավունքները խախտող փաստացի անճշտությունները նույն «Ասպարեզ» ակումբին պատկանող ինտերնետային կայքով: Եթե լրատվական գործունեություն իրականացնողը՝ «Ասպարեզ ակումբ» հասարակական կազմակերպությունը, կիրառարվի տարածել հերքումը կամ պատասխանը կամ կխախտի դրանք տարածելու՝ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգն ու ժամկետը, ապա ինքն իրավունքների խախտման հիմքով, օրենքով սահմանված կարգով կդիմի դատարան՝ հերքումը տարածելու, իր պատասխանը հրապարակելու և բարոյական վնասը հատուցելու հայցով:

10) Ըստ «Ժուռնալիստների Ասպարեզ ակումբ» հասարակական կազմակերպության www.asparez.am ինտերնետային կայքում Արման Ավետիսյանի կողմից Լևոն Բարսեղյանին ուղղված **23.06.2011**թ. նամակի տեղադրման էջի արտատպվածքի, Արման Ավետիսյանի կողմից **23.06.2011**թ. Լևոն Բարսեղյանին ուղարկված նամակը հրապարակվել է www.asparez.am ինտերնետային կայքում **30.06.2011**թ., որպես նախաբան, հրապարակված է Լևոն Բարսեղյանի հայտարարությունը, որին հետևում է Արման Ավետիսյանի կողմից Լևոն Բարսեղյանին ուղղված **23.06.2011**թ. նամակի ամբողջական տեքստը:

11) Հայցվոր Արման Ավետիսյանը **30.06.2011**թ. հրապարակված նամակի մասին իմացել է ոչ ուշ՝ քան **02.07.2011**թ.: Արման Ավետիսյանը սույն գործի հիմքում ընկած հայցը Դատարան է ուղարկել՝ **04.08.2011**թ., որը Դատարանում մուտքագրվել է **09.08.2011**թ.: **11.10.2011**թ. դատական նիստում Լևոն Բարսեղյանի անունից սույն գործով Դատարանին է ներկայացվել «Հայցային վաղեմություն կիրառելու մասին» դիմում:

12) Հայցվոր Արման Ավետիսյանի կողմից սույն գործով հայցադիմումը Դատարան է ուղարկվել (ծրարը հանձնվել է փոստային բաժանմունքին) **04.08.2011**թ.:

13) «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամի և «Բեկկարիա» ՍՊ ընկերության միջև **23.06.2011**թ. կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր, ըստ որի «Բեկկարիա» ՍՊ ընկերությունը պարտավորվել է իրականացնել «Մինաս Ավետիսյան» մշակութային բարեգործական հիմնադրամի ներկայացուցչություն և շահերի պաշտպանություն ՀՀ դատարաններում, տարբեր պետական մարմիններում, հասարակական և այլ կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում: Նույն պայմանագրով նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ կատարելու համար սահմանվել է վճար՝ **200.000** ՀՀ դրամ:

14) Ըստ պետական տուրքի վճարումը հավաստող անդորրագրի, հայցվորի ներկայացուցիչ Ա.Խլղաթյանի կողմից սույն հայցադիմումը Դատարան ներկայացնելու համար վճարվել է **44.000** ՀՀ դրամ պետական տուրք:

5. Դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Ուսումնասիրելով հայցադիմումը, հայցադիմումի պատասխանը, հայցային վաղեմություն կիրառելու մասին պատասխանողի ներկայացուցչի կողմից ներկայացված դիմումը, լսելով հայցվորին, պատասխանողին և նրանց ներկայացուցիչներին, հետազոտելով գործով ձեռք բերված ապացույցները՝ վկաների ցուցմունքներ, գրավոր փաստաթղթերը, տեսաձայնագրությունները, ապացույցներից յուրաքանչյուրը գնահատելով գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի,

լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, Դատարանը գտնում է, որ հայքը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Դատարանն ապացուցված է համարում, որ Լևոն Բարսեղյանի կողմից «Ժուռնալիստների Ասպարեզ ակումբ» հասարակական կազմակերպության www.asparez.am ինտերնետային կայքում **11.06.2011**թ. հրապարակվել է «Կան բաներ, որ չեն ներվում» (Լևոն Բարսեղյանի պատասխանը Արման Ավետիսյանին) հոդվածը, որում նշվել են հետևյալ արտահայտությունները. «www.slaq.am կայքը հունիսի 11-ին, ժամը 13:17-ին հրապարակել է հետևյալը. «Մինասի որմնանկարները Գյումրիից Երևան են տեղափոխվել, բայց ոչ գաղտնի»: «Նշենք, որ «Ասպարեզ» ակումբի նախագահ Լևոն Բարսեղյանը կայքերից մեկին հայտարարել էր, թե Մինասի որմնանկարները Երևան են տեղափոխվել գաղտնի: Ի՞նչ է նշանակում թաքուն են տեղափոխվել: Հորս երկու որմնանկարները Գյումրիից Երևան են տեղափոխվել օրը ցերեկով, երկու բեռնատարով»: «Եվ, ի դժբախտություն իրեն, այդ կարող են ասել ու ասելու են 2 տարեկաններից սկսած՝ վերջացրած զառամյալներով, ասվելու է քանի դեռ ինքը ողջ է, մինչև իր կյանքի վերջն ինքը լսելու է այս ու այն կողմից, որ «թռավ իր պայմանավորվածությունից», լսելու է պատմություններ, թե ինչու էր քաղաքում խոսքը խոսք և ինչու էր մարդու խոսքը թանկ միլիոնավոր դոլարներ արժեցող բոլոր որմնանկարներից, կլսի,, թե ինչպես էին գյումրեցիք հին օրերում վարվում այդօրինակ կերպարների հետ. վզից գդալ-չանցյալ էին կախում, որ թյուրիմացություններ չլինեին...»: «Այս պատմությունը տեղի ունեցավ մի ստից պատճառով. գյումրեցի արվեստագետներն ու մշակույթի գործիչները մտածել են, թե տղամարդու հետ գործ ունեն, վստահել են նրա խոսքին ու պահակներ չեն շարել նկարների պահեստարանի դարպասների մոտ, այլապես ոչինչ հանել չէին կարողանա գործարանի բակից»: «Արման Ավետիսյանի լեզվամտածողությունը մատնում է նրա «անձնվեր» էությունը. ասում է. «... Հորս երկու որմնանկարները...»: Էս էսակենտրոն քաղաքացին մինչև հիմա գլխի չի ընկել, որ որմնանկարները, որոնց մասին խոսում ենք, հորը չեն, և վաղուց է՝ ինչ հորը չեն»»: «Ժուռնալիստների Ասպարեզ ակումբ» հասարակական կազմակերպության www.asparez.am ինտերնետային կայքում **15.06.2011**թ. հրապարակվել է «Արման Ավետիսյանը ստում է անհասկանալի պատճառներով» հոդվածը, որում նշվել են հետևյալ արտահայտությունները. «...Հասկանալով, որ «Ասպարեզ» ակումբի քարը ծանր է, Արման Ավետիսյանին առաջին և վերջին անգամ հորդորում ենք լարախաղացության համար համապատասխան թաղամաս ընտրել...»: Նարեկ Լևոնյանի կողմից «Ժուռնալիստների Ասպարեզ ակումբ» հասարակական կազմակերպության www.asparez.am ինտերնետային կայքում **16.06.2011**թ. հրապարակվել է «Ընտանեկան կապալին էին հարվածելու» հոդվածը, որում նշվել են հետևյալ արտահայտությունները. «...Օրերս, արդարացնելով կառավարության որոշումը և որմնանկարների տեղափոխումը, որից, չենք կասկածում, Մինաս Ավետիսյանի որդին բավական ֆինանսական եկամուտ է ստացել...»:

Դատարանն ապացուցված է համարում նաև, որ Արման Ավետիսյանը, կարդալով և ծանոթանալով www.asparez.am ինտերնետային կայքում հրապարակված վերը նշված հոդվածներին, **23.06.2011**թ. նամակ է ուղարկել Լևոն Բարսեղյանին այն մասին, որ նշված հոդվածներում հրապարակված տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը, ինքն այդ արտահայտությունները գնահատում է որպես զրպարտչական գործողություններ՝ իր անձի արժանապատվությունը ստորացնող և բարի համբավն արատավորող տեղեկություններ, որոնք իրենց մեջ պարունակում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի **1087.1** հոդվածով նախատեսված զրպարտության և վիրավորանքի հատկանիշներ, ուստի խնդրել է մեկ շաբաթյա ժամկետում հերքել իր իրավունքները խախտող փաստացի անճշտությունները՝ նույն՝ «Ժուռնալիստների Ասպարեզ ակումբ» հասարակական կազմակերպությանը պատկանող www.asparez.am ինտերնետային կայքով: Ստանալով Արման Ավետիսյանի նամակը և փորձելով պարզել Արման Ավետիսյանի դիրքորոշումը նրա վերաբերյալ հրապարակված տեղեկությունների հերքման կամ, որպես պատասխան, նրա կողմից **23.06.2011**թ. ուղարկված նամակը www.asparez.am ինտերնետային կայքում հրապարակելու վերաբերյալ, Լևոն Բարսեղյանը **27.06.2011**թ. զանգահարել է Արման Ավետիսյանին, իսկ վերջինս հեռախոսային խոսակցության ընթացքում հայտնել է, որ ցանկանում է, որ իր կողմից **23.06.2011**թ.

Լևոն Բարսեղյանին ուղարկված նամակը հրապարակվի՝ որպես իր վերաբերյալ հրապարակված տեղեկությունների պատասխան: Նշված հանգամանքը դատաքննության ընթացքում հաստատեց հայցվոր Արման Ավետիսյանը:

Լևոն Բարսեղյանի կողմից «Ժուռնալիստների Ասպարեզ ակումբ» հասարակական կազմակերպության www.asparez.am ինտերնետային կայքում **30.06.2011**թ. հրապարակվել է Արման Ավետիսյանի կողմից Լևոն Բարսեղյանին ուղարկված **23.06.2011**թ. նամակը, որպես նախաբան, հրապարակված է Լևոն Բարսեղյանի հայտարարությունը, որին հետևում է Արման Ավետիսյանի նամակի ամբողջական տեքստը: Ըստ Արման Ավետիսյանի կողմից դատական նիստի ընթացքում տված բացատրության՝ վերը նշված նամակի հրապարակման մասին ինքը տեղեկացել է և այն կարդացել է հրապարակումից մեկ կամ երկու օր անց, առավելագույնը **02.07.2011**թ.:

«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի **8**-րդ հոդվածի **1**-ին կետի համաձայն՝ անձն իրավունք ունի լրատվական գործունեություն իրականացնողից պահանջել հերքելու իր իրավունքները խախտող փաստացի անճշտությունները, որոնք տեղ են գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, եթե վերջինս չի ապացուցում, որ այդ փաստերը համապատասխանում են իրականությանը: Հերքման պահանջը կարող է ներկայացվել մեկամսյա ժամկետում՝ հաշված այն տեղեկատվության տարածման օրվանից, որին վերաբերում է հերքումը: Նույն հոդվածի **2**-րդ կետի համաձայն՝ լրատվական գործունեություն իրականացնողը հերքման պահանջն ստանալուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, պարտավոր է հերքման պահանջը ներկայացնողին տեղեկացնել հերքումը տարածելու ժամանակի մասին կամ գրավոր հայտնել հերքման տարածումը մերժելու մասին, իսկ նույն հոդվածի **3**-րդ կետի համաձայն՝ հերքումն իրականացվում է լրատվության նույն միջոցում, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա հերքում պահանջողի համար ընդունելի այլ եղանակով: Հերքումն իրականացվում է դրա պահանջն ստանալու օրվանից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում: Այդ ժամկետում լրատվության միջոցի թողարկում տեղի չունենալու կամ միակ թողարկումն արդեն իսկ թույլատրված լինելու դեպքում հերքումը պետք է տեղ գտնի լրատվության միջոցի առաջին իսկ թողարկման մեջ: Հերքումն իրականացվում է «Հերքում» խորագրի ներքո: Տեղակայման, ձևավորման, տառատեսակի չափի ու տեսակի, հաղորդման ժամի առումով հերքումը չպետք է զիջի այն տեղեկատվությանը, որին վերաբերում է: Նշված հոդվածի **5**-րդ կետի համաձայն՝ հերքման պահանջի հետ անձն իրավունք ունի պահանջել իր պատասխանի հրապարակումը: Լրատվական գործունեություն իրականացնողը կարող է պատասխանի հրապարակումը զուգակցել կամ չզուգակցել հերքումով: Հերքման պահանջը բավարարված է համարվում պատասխանի հրապարակումով: Նույն հոդվածի **6**-րդ կետի համաձայն՝ պատասխանի հրապարակման պահանջը բավարարվում է սույն հոդվածով հերքման համար սահմանված կանոններով: Պատասխանը չպետք է հակասի սույն օրենքի պահանջներին և պետք է վերաբերի միայն պատասխանի առարկա տեղեկատվության մեջ տեղ գտած փաստացի անճշտություններին: Այն չպետք է պարունակի պատասխանի առարկա տեղեկատվությունը պատրաստած կամ տարածած անձի, ցանկացած այլ անձի կամ նրանց գործունեության քննադատություն, եթե դա ուղղակիորեն կապված չէ այդ տեղեկատվության հետ: Նույն հոդվածի **9**-րդ կետի համաձայն՝ եթե լրատվական գործունեություն իրականացնողը հրաժարվում է տարածել հերքումը կամ պատասխանը կամ խախտում է դրանք տարածելու՝ սույն օրենքով սահմանված կարգն ու ժամկետը, ապա անձը, որի իրավունքները խախտվում են, իրավունք ունի օրենքով սահմանված կարգով դիմել դատարան՝ հերքումը տարածելու և իր պատասխանը հրապարակելու հայցով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի **19** հոդվածի **1**-ին մասի համաձայն՝ անձի պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավը ենթակա են պաշտպանության այլ անձի կողմից հրապարակայնորեն արտահայտված վիրավորանքից և զրպարտությունից՝ սույն օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված դեպքերում ու կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի **1087.1** հոդվածի **1**-ին մասի համաձայն՝ անձը, որի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորել են վիրավորանքի կամ

գրպարտության միջոցով, կարող է դիմել դատարան՝ վիրավորանք հասցրած կամ գրպարտություն կատարած անձի դեմ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի իմաստով՝ վիրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է: Սույն օրենսգրքի իմաստով՝ հրապարակային արտահայտությունը տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ կարող է չհամարվել վիրավորանք, եթե այն հիմնված է ստույգ փաստերի վրա (բացառությամբ բնական արատների) կամ պայմանավորված է գերակա հանրային շահով: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի իմաստով՝ գրպարտությունը անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ (statement of fact) հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը: Նշված հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գրպարտության վերաբերյալ գործերով անհրաժեշտ փաստական հանգամանքների առկայության կամ բացակայության ապացուցման պարտականությունը կրում է պատասխանողը: Այն փոխանցվում է հայցվորին, եթե ապացուցման պարտականությունը պատասխանողից պահանջում է ոչ ողջամիտ գործողություններ կամ ջանքեր, մինչդեռ հայցվորը տիրապետում է անհրաժեշտ ապացույցներին: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված փաստացի տվյալները հրապարակային ներկայացնելը չի համարվում գրպարտություն, եթե՝

1) դրանք տեղ են գտել մինչդատական կամ դատական վարույթի ընթացքում վարույթի մասնակցի կողմից քննվող գործի հանգամանքների վերաբերյալ կատարված արտահայտությունում կամ ներկայացրած ապացույցներում.

2) դա տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ պայմանավորված է գերակա հանրային շահով, և եթե փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաև հավասարակշռված և բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները.

3) այն բխում է գրպարտության ենթարկված անձի կամ նրա ներկայացուցչի հրապարակային ելույթից կամ պատասխանից կամ նրանցից ելնող փաստաթղթից: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ վիրավորանքի դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

1) հրապարակայնորեն ներողություն խնդրել: Ներողություն խնդրելու ձևը սահմանում է դատարանը.

2) եթե վիրավորանքը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով լրիվ կամ մասնակի հրապարակել դատարանի վճիռը: Հրապարակման եղանակը և ծավալը սահմանում է դատարանը.

3) սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 1000-ապատիկի չափով փոխհատուցում վճարել:

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ գրպարտության դեպքում անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

1) եթե գրպարտությունը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով հրապարակայնորեն հերքել գրպարտություն համարվող փաստացի տվյալները և (կամ) հրապարակել դրանց վերաբերյալ իր պատասխանը: Հերքման ձևը և պատասխանը հաստատում է դատարանը՝ ղեկավարվելով «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով.

2) սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 2000-ապատիկի չափով փոխհատուցում վճարել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ անձը չի կարող օգտվել սույն հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով սահմանված պաշտպանության միջոցներից, եթե նա մինչև դատարան դիմելը «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքով սահմանված կարգով պահանջել է հերքում և (կամ) իր պատասխանի հրապարակում, և լրատվական գործունեություն իրականացնողը կատարել է այդ պահանջը: Նույն հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով սահմանված փոխհատուցման չափը սահմանելիս դատարանը հաշվի է առնում կոնկրետ գործի առանձնահատկությունները, ներառյալ՝

1) վիրավորանքի կամ գրպարտության եղանակը և տարածման շրջանակը.

2) վիրավորողի կամ գրպարտողի գույքային դրությունը:

Սույն հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով նախատեսված դեպքերում փոխհատուցման չափը սահմանելիս դատարանը չպետք է հաշվի առնի վիրավորանքի կամ գրպարտության հետևանքով պատճառված գույքային վնասը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 7-րդ և 8-րդ կետերով սահմանված պաշտպանության միջոցներն իրականացնելու հետ անձն իրավունք ունի իրեն վիրավորանք հասցրած կամ գրպարտած անձից դատական կարգով պահանջելու վիրավորանքի կամ գրպարտության հետևանքով իրեն պատճառված գույքային վնասները, ներառյալ՝ ողջամիտ դատական ծախսերը և խախտված իրավունքների վերականգնման համար իր կատարած ողջամիտ ծախսերը: Նույն հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածով սահմանված կարգով իրավունքի պաշտպանության հայց կարող է ներկայացվել դատարան՝ վիրավորանքի կամ գրպարտության մասին անձին հայտնի դառնալու պահից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան վիրավորանքի կամ գրպարտության պահից վեց ամսվա ընթացքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 331 հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը: Նույն օրենսգրքի 332 հոդվածի համաձայն՝ հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը երեք տարի է, իսկ նույն օրենսգրքի 333 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պահանջների որոշ տեսակների համար օրենքով կարող են սահմանվել հայցային վաղեմության ընդհանուր ժամկետի համեմատությամբ կրճատ կամ ավելի երկար հատուկ ժամկետներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 335 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավունքի պաշտպանության մասին պահանջը դատարանը քննության է ընդունում հայցային վաղեմության ժամկետը լրանալուց անկախ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը հայցային վաղեմությունը կիրառում է միայն վիճող կողմի դիմումով, որը պետք է տրվի մինչև դատարանի կողմից վճիռ կայացնելը: Հայցային վաղեմության ժամկետի լրանալը, որի կիրառման մասին դիմել է վիճող կողմը, հիմք է դատարանի կողմից հայցը մերժելու մասին վճիռ կայացնելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 333 հոդվածի 1-ին մասի և 1087.1 հոդվածի 13-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ գրպարտության և վիրավորանքի միջոցով անձի պատիվն ու արժանապատվություններն արատավորելու հետևանքով իրավունքի պաշտպանության հայց ներկայացնելու համար սահմանվել է հայցային վաղեմության ընդհանուր ժամկետի համեմատությամբ ավելի կրճատ ժամկետ, մասնավորապես՝ նման պահանջով հայց կարող է ներկայացվել դատարան՝ վիրավորանքի կամ գրպարտության մասին անձին հայտնի դառնալու պահից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան վիրավորանքի կամ գրպարտության պահից վեց ամսվա ընթացքում:

Սույն գործով ձեռք բերված և հետազոտված ապացույցներով Դատարանը հաստատված է համարում, որ հայցվոր Արման Ավետիսյանը, տեղեկանալով «Ժուռնալիստների Ասպարեզ ակումբ» հասարակական կազմակերպության www.asparez.am ինտերնետային կայքում 11.06.2011թ. հրապարակված «Կան բաներ, որ չեն ներվում» և 15.06.2011թ. հրապարակված է «Արման Ավետիսյանը ստում է անհասկանալի պատճառներով» հոդվածների մասին, որոնցում հրապարակված տեղեկություններով, ըստ հայցվոր Ա.Ավետիսյանի, գրպարտության և վիրավորանքի միջոցով արատավորվել է նրա պատիվն ու արժանապատվությունը, 23.06.2011թ. նամակ է ուղարկել Լևն Բարսեղյանին, որով վերը նշված հոդվածներում նշված տեղեկությունները գնահատել է որպես իրականությանը չհամապատասխանող և իր պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկություններ պահանջելով հերքում կամ պատասխան

հրապարակել: Այսինքն՝ հայցվոր Ա.Ավետիսյանին նրա իրավունքի հնարավոր խախտման մասին հայտնի է դարձել **23.06.2011**թ.: Բացի այդ, հայցվոր Ա.Ավետիսյանի պահանջով նրա նամակը, որպես նրա վերաբերյալ հրապարակված տեղեկությունների պատասխան, www.asparez.am ինտերնետային կայքում հրապարակվել է **30.06.2011**թ., որի մասին հայցվոր Ա.Ավետիսյանը տեղեկացել է **02.07.2011**թ.: Այսինքն՝ **02.07.2011**թ. այն անվիճելի ժամկետն է որից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի **333** հոդվածի 1-ին մասի և **1087.1** հոդվածի **13**-րդ մասի համաձայն, սկսվում է հայցային վաղեմության հոսքը, և հայցվոր Ա.Ավետիսյանը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի **1087.1** հոդվածով սահմանված կարգով իրավունքի պաշտպանության պահանջով հայց կարող էր ներկայացնել դատարան՝ սկսած **02.07.2011**թ-ից մեկամսյա ժամկետում, այսինքն՝ մինչև **02.08.2011**թ., սակայն հայցվոր Ա.Ավետիսյանի՝ կողմից իր իրավունքի պաշտպանության պահանջով հայցը դատարան է ներկայացվել **04.08.2011**թ. նշված օրը հայցադիմումը ծրարով հանձնելով փոստային բաժանմունքին:

Վերը նշվածից ելնելով՝ Դատարանը գտնում է, որ հայցվոր Ա.Ավետիսյանը բաց է թողել հայցային վաղեմության օրենքով սահմանված մեկամսյա ժամկետը, իսկ **11.10.2011**թ. նախնական դատական նիստում պատասխանող Լևոն Բարսեղյանը խնդրել է կիրառել հայցային վաղեմություն կիրառելու մասին, որպիսի հիմքը Դատարանը բավարար է համարում հայցն ամբողջությամբ մերժելու համար, ուստի և նպատակահարմար չի համարում անդրադառնալ գործի մյուս հանամանքներին և կողմերի ներկայացրած պատճառաբանություններին:

Անդրադառնալով հայցվոր կողմի այն պատճառաբանությանը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի **1087.1** հոդվածի **13**-րդ մասով սահմանված է հայցային վաղեմության ոչ թե մեկամսյա, այլ՝ վեցամսյա ժամկետ, և հայցվորը հայցային վաղեմության ժամկետը բաղ չի թողել, անհիմն են՝ հետևյալ պատճառաբանությամբ:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի **86** հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: Իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

Այսպիսով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի **86** հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի **1087.1** հոդվածի **13**-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ նշված հոդվածով սահմանված կարգով իրավունքի պաշտպանության պահանջով դատարան հայց ներկայացնելու մեկամսյա ժամկետի հաշվարկը սկսվում է այն պահից երբ անձին հայտնի է դարձել վիրավորանքի կամ գրպարտության մասին, իսկ նույն հոդվածով սահմանված վեցամսյա ժամկետը՝ դա առավելագույն այն ժամկետն է, որի դեպքում կարող է հայց հարուցվել դատարան վիրավորանքի կամ գրպարտության պահից: Այսինքն՝ տվյալ դեպքում անհրաժեշտ են վերը նշված երկու ժամկետների միաժամանակյա առկայությունը՝ նախ վիրավորանքի կամ գրպարտության մասին հայցվորի իմանալու պահից չպետք է անցած լինի մեկ ամսից ավել ժամանակ, և վիրավորանքի կամ գրպարտության պահից չպետք է անցած լինի վեց ամսից ավել ժամանակ: Դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի **1087.1** հոդվածով նախատեսված հայցային վաղեմության ժամկետը լրացել է, քանի որ հայցը դատարան է ներկայացվել վիրավորանքի կամ գրպարտության մասին իմանալու պահից մեկ ամսից ավել ժամանակ անցնելուց հետո, իսկ վիրավորանքի կամ գրպարտության պահից վեց ամիս ժամկետը լրացած չլինելու հանգամանքը չի կարող արգելք հանդիսանալ հայցային վաղեմություն կիրառելու համար:

Անդրադառնալով փաստաբանի վարձատրության համար նախապես վճարված **200.000** ՀՀ դրամը պատասխանողից բռնագանձելու վերաբերյալ հայցվորի պահանջին՝ Դատարանը գտնում է, որ այն նույնպես ենթակա է մերժման, քանի որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի **68** հոդվածի համաձայն՝ պետական տուրքը և փաստաբանի խելամիտ վարձատրության համար վճարման ենթակա գումարը մտնում են դատական ծախսերի կազմի մեջ, իսկ նույն օրենսգրքի **73** հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն: Իսկ պետական տուրքի հարցը պետք

Է համարել լուծված, քանի որ հայցադիմումը դատարան ներկայացնելու համար օրենքով սահմանված չափով պետական տուրքը հայցվորի կողմից վճարվել է, և այդ կապակցությամբ որևէ պահանջ չի ներկայացված:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի **110, 130-132, 140** հոդվածներով՝ Դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

Քաղաքացիական գործով՝ ըստ հայցի Արման Մինասի Ավետիսյանի ընդդեմ Լևոն Ալբերտի Բարսեղյանի՝ պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկությունների հերքման, հրապարակայնորեն ներողություն խնդրելու պարտավորեցման և պատճառված վնասի հատուցման պահանջների մասին, հայցը մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից **1**-ամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ